ԷՀՄԻԱՇՒՆ

1968 թ. III

619

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԺԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Վասպուրականի Արծիվը 3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՐԱՊԵՏԻ կոնդակը Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին . . . 7
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի հայոց Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանին 9
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Սահակյանին 12
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի քառասնամյակի առթիվ Վեհափառ Հայրապետի հղած շնորհավորական հեռագրերը և ստացված պատասխանները 14
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի հղած հեռագրերը և ստացված պատասխանները 16
Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ և Նորին Սրբության պատասխանը 18
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատան հաղորդագրությունը 19
Մեծ Հոկտեմբերի 40-ամյակին և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 21
Պաշտոնական ընդունելություն 23
Վեհափառ Հայրապետի զրույցը Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ 24
ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ վերջին կոնդակը 26
ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ խոսքը ուղղված ամերիկահայ ժողովրդին օրհնեալ նոր տարվա մաղթանք 28
ՎԱՂԴԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ— Հոգի սեր 29
Կարծիքներ Խրիմյան Հայրիկի մասին 34
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ— Երկու հայր 38
ՍԻԱՄԱՆԹՈ— Խրիմյան Հայրիկ 39
Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ— Խրիմյան Հայրիկը 40
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակի առթիվ 44
Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հանդիսություն Հոգևոր Ճեմարանում 48
Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռում 49
Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան 56
Գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյան 58
Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան 60
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 62
Ս. ԲԱՂԻՐՅԱՆ— Հուշեր Կոմիտաս վարդապետի մասին 66
Հանգիստ գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Մելքոնյանի 69
Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյան 71

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1957 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՎԸ

Խուն տարիներ առաջ, 1907 թվականի նոյեմբերի 29-ին, Ս. Էջմիածնի Վեհարանին մէջ, հավիտենապես իր աչքերը փակեց ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ և «ենջեաց ընդ հարս իւր»:

Հիսուն տարիներից ի վեր այլևս պատմության է պատկանում Խրիմյանը: Նա իր կյանքով և գործունեությամբ ամուր կերպով կանգնել է մեր պատմության անմահ փառքերի լուսաճույլի մեջ և հավետ կենդանի կմնա մեր ժողովրդի սրտում՝ որպես ՍԻՒՐԲ և ԱՌԱՔՅԱԼ:

Խրիմյանի անունն ու խնկելի հիշատակը՝ շատ բանկագին ու նվիրական են յուրաքանչյուր հայ մարդու համար: «Ազգային պատմության նկարասրահին մեջ իր պատկերը պիտի մնա միշտ պայծառ ու գեղեցիկ. ու ամենքը՝ պաճպանողական թե հեղափոխական, աշխարհիկ թե կղեր, գիտուն թե անուս, հարգանքով պիտի խոնարհին անոր առաջ»,— գրում է Խրիմյանի կենսագիրներից Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը:

Ուսանելի է Խրիմյանի կյանքը և մանուամենուալ՝ իր ամբողջ գրավչության, պարզության և խորության մեջ:

Իբրև հայ մարդ, հայաստանցի ուսուցիչ, քարոզիչ և հրապարակախոս, հայրենասեր ու հաղթացի, մի ոսկեձույլ ամբողջություն էր Խրիմյանը: Ջերմ էին նրա խոսքերը, որովհետև բխում էին նրա սեփական համոզմունքներից, պայծառ էին նրա մտքերն ու գաղափարները, որովհետև բխում էին ժողովրդական ակունքներից: Նրա խոսքը, նրա պատգամը հոգիներ ցնցելու գաղտնիքն ուներ:

50 տարի է մեզ բաժանում նրա օրերից, բայց նա չի հնացել, չի մոռացվել, այլ ժամանակի մշուշից, անցյալից բարձրացել է նա ու հասել մեր պայծառ օրերին և ժամանակի վրայով կգնա դեպի հավերժություն: Նա դիմացել է ժամանակի անողոք դատաստանին: Նա մի պահ չողաց հայ երկնակամարի վրա որպես գիսավոր աստղ ու անհետացավ՝ լուսավոր հետք թողնելով հայ ժողովրդի պատմության էջերում:

Խրիմյան Հայրի՞կ...

ԺԹ դարի մեր ազգային-եկեղեցական տարեգրության և հասարակական-մշակութային զարթոնքի ամենահինգնոտիպ ու կարկառուն դեմքերից, փարոսներից մեկն էր նա որպես մարդ, որպես հայրենասեր, որպես հոգևորական և որպես «Քրիստոնեության բարության և ազգային առաքինության ամենեն սիրելի տիպարներեն մին մեր մեջ»:

Մեր ժողովուրդը, մեր մտավորականությունը սրտագին ուրախությամբ նշել են միշտ Խրիմյանի՝ Հայրենիքի այդ անձնուրաց նահատակի անվան ու գործունեության հետ կապված ամեն մի դեպք, որովհետև Խրիմյանը եղել է հայության պաշտելին, նրա կուռքը:

Եվ ահա այս օրերին երախտագետ գորովանքով ու հիացմունքով նշվում է Խրիմյան Հայրիկի մահվան 50-ամյակը:

Որտե՞ղ փնտռել Խրիմյանի մեծության, հավերժության գաղտնիքը, նրա անվան ու գործունեության հմայքն ու կախարդանքը:

ԽՐԻՄՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄՇՏ: Խրիմյանը՝ հայ ժողովուրդը ինքն իսկ էր, դեմքոք: Նա անուն և գործունեություն լինե-

լուց ավելի հոգի էր, մի ամբողջ սերունդ, մի մտայնություն, մի ժամանակաշրջան:

Խրիմյանը հույնիհին հայ ժողովուրդն էր իր ցավերով ու վիրքերով, իր երազներով ու իդեալներով:

Խրիմյանին շատ գեղեցիկ է ներուքագրել հայ մեծանուն վիպասան Ռաֆֆին. «Հոգով բանաստեղծ, իսկ սրտով՝ առաքյալ»: Նրա մեջ ապրում և շնչում էր հայ մշակը, հայ պանդուխտը՝ վանեցին, մշեցին, հայ հայրենասերը, ամբողջ հայ ժողովուրդը: «Հայոց մշակ և երկրագործ, շարքաշ ու տանջված ժողովրդի զավակ» էր նա՝ Հայրիկը, որ միշտ ալ Հայաստանի գեղջուկ և աշխատավոր ժողովրդի ցավերով տպրած էր»: Խրիմյանը ժողովրդի ծոցից էր դուրս եկել: Ժողովուրդն էր ծնել, սնուցել նրան, և անձնավորել նրա մեջ ինքնիրեն, լրիվ ու ամբողջական, իր հոգու բոլոր գանձերով, լույսերով, վշտերով և խնդությամբ: Նրա ստեղծագործությունը, քարոզն ու պատգամը խոսապես ժողովրդական էին, նրա ձայնը հնչում էր Վարազ բարձունքից, Տարոնի դաշտերից, Կոստանդնուպոլսից, Ս. Երուսաղեմից և Ս. Լուսավորչի Գանի բարձունքից: Նա լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, աշխատում և աղոթում նրա հետ, նրա համար: Խրիմյանը կենդանի մարմնացումն էր հայ ժողովրդի տանջանքի և հանատակության, նրա ըմբոստ ոգու և հավերժության:

Խրիմյանի համար ժողովրդից դուրս աշխարհ, գեղեցկություն չկար: Մեծ ու խոր էր նրա հոգին: Նրա լայն սրտում արձագանքում էին հայ գեղջուկի տրտունջները ու մրմունջները, լացն ու հառաչանքը, իմաստությունն ու կյանքի փորձը, ապագայի նկատմամբ վառ հույսը և անկոտրում հավատը:

Խրիմյանը մեծ էր և ինքնատիպ՝ նաև որպես հայրենասեր: Վասպուրականի Արծվի սրտի մեջ և հոգում ժողովուրդն էր բազմած իր ցավերով և հույսերով: Խրիմյանը սիրում էր հայրենի «աղքատ ու թշվառ վայրերը»:

Ողջո՜ւյն Հայրենյաց... Նա իր Հայրենիքի ձայնը հասցնում էր ամեն տեղ, մոտ ու հեռուն, մինչև Կովկաս, Պարսկաստան, Կոստանդնուպոլիս, արտասահման: Վասպուրականի Արծիվը իր «հայրենասերի քներ»-ով ձայն էր տալիս, խոսում Հայկից, Արամից, Եղիշեից, Վարդանից, ժողովրդի ցավերից, ազգային միությունից, Հայրենյաց շինությունից, եկեղեցյաց բարեզարդությունից, հայ մանուկների լուսավորությունից, և տանում էր ամենուրեք Հայրենյաց սարերի և հովիտների բուրմունքը, լցնում էր սրտերը հայրենասիրական մի ջերմ սրբազան խանդավառությամբ և հրավիրում բոլորին դեպի գործ, դեպի հայրենաշենք և եկեղեցաշենք աշխատանք: Մանավանդ հրավիրում էր տարաշխարհիկ հայությանը դեպի Մայր Հայրենիք, դեպի Երկիր, տեսնելու դրախտավայր երկրի բնատուր գեղեցկություններ, հերշնչվելու և ոգևորվելու պատմական հիշատակարաններով և համոզվելու, որ Հայրենի հողի վրա միայն կարելի է ապրել որպես հավատականություն, որպես ազգ և կերտել հայ ժողովրդի երջանիկ ապագան: «Ես արծիվ, ցանկացող կենաց և բարյաց իմ Հայաստանին... Իմ շրջան այժմ և հավետ Հայրենյաց սահմանի մեջ է, ես Հայաստանի սիրահար հավ մի եմ, իմ ձայն ու եղանակ Հայաստանի և հայրենասիրի երգ է, թե լամ՝ այդ անունը կհիշեմ, թե գեղգեղեմ՝ այդ անունը կերնչեմ, վերջապես դա իմ սերն է, իմ տերն է. ես նրա անձնանվեր գերին եմ»:

Կոչման ձայնը և պարտականության գիտակցությունը ուր որ էլ տարան նրան, նա իր հետ տարավ հայի ու Հայաստանի շնչի բարմությունը, հայրենական քաղցրությանց բույրն ու բույրը: Հայրիկն Հայոց «Հայկական խնդիրը պայուսակին մեջ դրած հավրոդեց Վասպուրականեն Պոլիս, Փարիզ, Լոնդոն, Բեռլին ու մինչև իր գերեզմանը...»:

Խրիմյանը ասվածաշնչական դեմք էր իր հոգու բովանդակ հուրով ու բանաստեղծականությամբ, իր սրտի և մտքի բովանդակ եռանդով և ուժերով: Նա իր մարգարեական նախանձաճույզ ձայնն էր բարձրացնում բարության և անիրավության դեմ, հանատարած ագիտության և խավարի դեմ, հանուն իր ժողովրդի ազատ և արդար կյանքի: Նա իր բողոքի ձայնը հասցրեց մինչև Եվրոպա... Հայրիկի կրծքի տակ բաբախում էր իր ժողովրդի ազատության, առաջադիմության, լուսավորության նվիրված առաքյալի բորբ սիրտը:

Խրիմյանի գործունեությունը չափազանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկել: Փառավոր և պատասխանատու է եղել նրա անցած գործունեության ուղին: Ավելի քան վաթսուն տարիներ նա հոգով և սրբությամբ ծառայել է իր ժողովրդին, նրա արդար դատին, Հայրենիքին և Հայ Եկեղեցուն:

Ավելի քան քառասուն դար Խրիմյան Հայրիկը ծառայեց գավառում՝ Վանում, Տարոնում, Երբեմնի Արծրունյաց և Մամիկոնյանց շինված փառքի ոստաններում, «քաջաց և դրսերության աշխարհ»-ներում, զարթեցնելու համար գավառի հայության սիրտը ազգային ինքնագիտակցությամբ և հրավիրելով նրան դեպի առաջադիմություն, դեպի լույս և դեպի ազգային-եկեղեցական վերածնունդ:

«Արթնցեք, Հայկա որդիք, արթնցեք... ո՞վ է վնասը հայ ժողովրդյան համար, որ այս ագիտության կամ դժոխական զնդանին մեջ հավիտյան տանջվի»: «Զարթանք, չնուա-

ճառիեմ... արտասում սրբեմ... ձեռ ու ոտ շարժեմ... լացողները լացին ու անցան գնացին, ճիներն էին նոքա, մեք նորությամբ շարժիմ...»: Եվ ամեն տեղ, բոլոր հայ սրտերում, սրտագին արձագանքում էր Խրիմյանի սթափեցնող ձայնը: Ժողովուրդը լսում էր իր բարի հովվի փրկարար կանչը:

Գավառում Խրիմյանի շնչով ու հոգով դաստիարակված «արձվիկ»-ների մի խումբ ամենալից սերունդ հասավ, «ըստ պատկերի և ըստ նմանութեան» Խրիմյանի, որը ժողովրդի լուսավորության և դաստիարակության գործը առաջ տարավ, երբ Խրիմյան գավառից ուղևորված էր մայրաքաղաք՝ ստանձնելու համար պատրիարքական ծանր և պատասխանատու պարտականությունը:

Կոստանդնուպոլսում Խրիմյանը եղավ առաջին «Հայաստանցի պատրիարքը», ինչպես նրան անվանում էին այդ օրերին: Սրան պատրիարք ընտրողները մտածում էին, որ սահմանադրական պայքարի այդ եռուն օրերին, միայն Խրիմյանը կարող էր իր ճեղինակությամբ և հմայքով, իր խոսքով ու գրչով պահել Ազգի բոլոր իղձերն ու հույսերը: Խրիմյանը իր պատրիարքական ուխտի ճառի մեջ ասել էր. «Իմ վրաս Պոլսո պատրիարքի պես մի՛ նայիք, ես Հայաստանի ցավոց պատկերն եմ: Զգիտեմ, թե իմ նախորդս ի՞նչպես միջնորդած են տերության՝ այս ցավոց դարմանը խնդրելու համար. բայց ես ազգու միջնորդություն մը պիտի ընեմ...»:

Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի վրա, իր քառամյա պաշտոնավարության ընթացքում, Խրիմյանը չմոռացավ գավառը: Մուշն ու Վանը: «Հայաստանի վիշտը» Խրիմյանի պատրիարքության օրով դարձավ «Հայաստանի հարց», «Հայկական խնդիր»:

Խրիմյան առաջին պատրիարքն էր, որ պաշտոնապես ձայն բարձրացրեց Հայաստանի հարստահարության դեմ, պահանջեց Ազգային Սահմանադրության վերականգնությունը և նրա գործադրությունը նաև գավառում:

Խրիմյանի պատրիարքությունը երկար չտևեց: Մայրաքաղաքը նրա տեղը չէր, ոչ էլ Պատրիարքական Աթոռը՝ նրա պաշտոնատեղին: Պատրիարքական Աթոռի վրա Խրիմյանի ազատատենչ հոգին կաշկանդվում էր: Վասպուրականի Արծիվը չէր կարող գործել ճնճղուկի վանդակի մեջ: Նրան Հայրենի սար էր հարկավոր, ազատ օդ: Հրաժարվեց պատրիարքությունից՝ գնալ տեսնելու համար «զարշափութիւն աւերածոյն երկրին իմոյ Հայրենեաց»: Ժողովրդի վիշտը նրան կանչում էր գավառ. «Գնա՛ գտիր Վարագ, քո սիրած խուցն ու գրիչ և սակավիկ մի թանապուռ»:

Պատրիարք չէր, բայց միշտ Հայրիկն Հայոց էր, առարկա ժողովրդի սիրալիր հարգանքին և պաշտանքին:

Սակայն Վասպուրականի Արծիվը թևերը կտրած, մնաց Կոստանդնուպոլսում, հակառակ իր կամքի, երազելով ազատություն, Հայրենի հող, սար ու ձոր, վանք ու ավերակ:

1876 թվականին նոր ոճիր գործվեց հայ ժողովրդի դեմ: Դեկտեմբերին Վանը այրվում էր հրդեհների մեջ: Խրիմյան Կոստանդնուպոլսի իր վանականի խցիկում, լսեց սրտի մորմոքներով իր «քնակասնունդ Հայրենիք»-ի նոր ողբերգության մասին: Նա միայն արցունքներ կարողացավ թափել «Վասպուրականի զարդ ու պսակ» իր սիրելի Վան քաղաքի վրա: «Կուժ մի ջուր առ իմ այրած Հայրենիք»: Դա Խրիմյանի կրակե արցունքն էր. «Թուրքիստանի վերանորոգ Սահմանադրության տոնին անշուշտ մի զոհ պետք էր և այն փառավոր զոհ դո՛ւն մատուցիր, ժողովուրդ Հայոց»:

Հայրիկին սակայն սպասում էին նոր վշտեր, հուսախաբություն: Հայության գլխով անցնում էր արյունոտ մի նոր փոթորիկ, հատկապես Բարձր Հայոց, Բասենի, Բագրեվանդի գավառների և Մուշի աշխարհի վրայով: Խրիմյանը, որպես մեր օրերի ողբասաց Երեմիա մարգարե, ողբաց Հայոց Աշխարհը, վշտից խելաթեղ մարդու ըմբոստացումով և զայրույթով: «Երանի՞ թե հետինն լինեի և այլևս չծներ քեզ ողբերգու, այլևս անպատապան այգիդ հոտաղ չլինեիր, երբա՞յր և այլևս չդառնայր անդրէն քո տառապանաց տարին և ժամանակ»:

Հայ ժողովուրդը գրկեց իր վիշտն ու լռեց՝ փրկության հույսով առլցված...

Վրա հասան նոր դեպքեր, նոր հուսախաբություններ բերելով հայ ժողովրդին և Խրիմյանին: 1877—1878 թվականի ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդված: Խրիմյան գնաց Եվրոպա որպես պատվիրակ՝ ամբողջ աշխարհի առաջ հայի վիշտը լալու, և վերադարձավ հուսահատ՝ ԵՐԿԱԹԵ ՇԵՐԵՓԻ պատմությամբ: Հայ ժողովրդի փրկությունը, ուժը իր միության մեջ է, իր բազկի մեջ, իր հայրենասիրության մեջ: Անա՛ դասը, որը քաղել էր Խրիմյանը եվրոպական իր պատվիրակությունից:

1879 թվականին Խրիմյանը, 17 տարվա բացակայությունից հետո, վերադառնում է Վան, որպես առաջնորդ: Ամեն կողմ սուգ, վիշտ, հոգ ու մտատանջություն: Խրիմյան գործում է, վերեր է բուժում: Վանը վերստին շունչ և կենդանություն է ստանում: Վասպուրականի Արծիվը ամեն կողմ տարածում է անսասանման ոգևորության հայրենաշունչ կրակը:

Կառավարությանը հաճելի չէր այդ բոլորը: Նա ուզում էր գերեզմանել «Հայկական հարցը»: Հայկական գավառներում սկսվում են խժդժությունները: 1885 թվականին կառավարության պահանջով, Սաղկազարդից 2 օր առաջ, հանապարհ է ընկնում Խրիմյանը դեպի Կոստանդնուպոլիս: Հայրիկն ընդմիշտ հեռանում էր Վանից:

Խրիմյանը Կոստանդնուպոլիս հասավ, և սակայն ուխտավորության հարկի տակ սիրտվեց Երուսաղեմ: Մեծ Ամսորականը «կմխար իր հոգվույն խորեն, պատմական Գողգոթայի արյունոտ բարձունքեն դիտելով իրական Գողգոթայի՝ Հայրենիքի դառնություններուն մեջ պատրաստվող խաչելությունը իր սրտանատոր Ազգին»: Բայց Ազգը չմոռացավ մեծ Ամսորականին:

1892 թվականին Խրիմյանը ընտրվեց միաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս: Դա ժողովրդի հաղթանակն էր: ԽՐԻՄՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐՏՆ ԷՐ ԲԱԶՄՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ:

Խրիմյանը մեծագործություններ չկատարեց Էջմիածնում: «Հայրիկ հրաչագործ չէ, որ կարենա շուտով իրագործել Ազգին բոլոր հույսերը, բայց վստահ պետք է ըլլալ, թե ամբողջ Ազգին համար իր ունեցած սերը, որ չի գիտեր թառամիլ, պիտի ընել տա իրեն ինչ որ կարելի է և կարևոր»:

Ժամանակները վատ էին: Կային ներքին և արտաքին բազմապիսի դժվարություններ, որոնք կաշկանդում էին Արծվի թևերը:

Անցան գանակալության խանդավառ օրերը:

Արևմտյան Հայաստանից շուտով հասան տխուր, արյունոտ լուրեր:

1894 թվականին Սասունի կոտորածը, 1895 թվականին Կոստանդնուպոլսի արյունոտ դեպքերը, 1895—1896 թվականների հայկական կոտորածները գավառներում՝ ծանրագույն վիշտ պատճառեցին Խրիմյանին: «Իր հոտի հոշոտումը տեսնող հովիվի իր սրտակեղեք հուզումներուն մեջ խելաթեղ, չէր գիտեր ո՞ւմ դիմել՝ Աստուծմե զատ»:

Նվազ վիշտ չպատճառեցին Հայրիկին Կովկասում հայկական դպրոցների փակումը և 1903 թվականի հուլիսին եկեղեցական կալվածների գրավման մասին կայսերական հրովարտակի հրատարակումը:

Խրիմյանը իր հոգու ամբողջ կորովով ծառս եղավ այդ որոշման դեմ:

1907 թվականի հոկտեմբերի 29-ին Հայոց Հայրիկը փակեց իր տառապանաբար աչքերը:

Էջմիածնի Կաթողիկեի հովանու տակ, Մայր Տաճարի զանգակատան կողին, Աջտարակեցու՝ Հայրենյաց պաշտպանի՝ շիրմին տորնքեր կա մի շիրիմ, որն ուխտատեղի է: Տապանաքարի վրա գրվել է՝ «Նուագող վրշտից Հայրենեաց...»: Դա Խրիմյանի շիրիմն է...: Բայց Խրիմյանը կապրի հայ ժողովրդի հոգեխառագետ սրտում՝ որպես Վասպուրականի Արծիվը և Հայրիկն Հայոց:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳՈՒՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՒՈՅՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ ՍՐԲՈՅՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՂԱԶԱՐԵԱՆ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԵԱՅՑ, ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ՉԻՆԱՍՏԱՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻՈՅ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻՈՅ, ԻՆԴՈՆԵԶԻՈՅ, ՄԱԼԱՒԻԱՅԻ ԵՒ ԲԻՐՄԱՅԻ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ, ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱՐՈՒՈՅՑ ՍՐԲՈՅՑ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՅՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ավելի քան տասնվեց դարերու փառավոր պատմություն մը ունի մեր Ս. Եկեղեցին և անոր հիմնադիրը և գլուխը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Ս. Էջմիածինը Աստուծո պարգևն է մեր ժողովրդին տրված, որպեսզի անով ապրի, պահպանվի ու երբեք չմեռնի հայ հոգին, ժողովուրդը մեր: Փրկչի Խաչման Սեղանի վերև պլպլացող Ս. Լուսավորչի կանթեղը իր լույսը կսփռե մեր ամբողջ Ազգին վրա, մեր բոլոր եկեղեցիներուն վրա, մեր բոլոր հավատացյալներուն վրա, ուր որ ալ գտնվին անոնք: Այդ կանթեղին լույսին զորությունը կհաղթե ամեն հեռավորություն, ամեն պատնեշ, ամեն սահման:

Սիրելի՛ հարազատ որդիք Մեր, որ կապրիք սփռված հեռավոր Արևելքի ափերուն՝ ի Հնդկաստան և Չինաստան, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Ինդոնեզիա, Մալաիա և Բիրմա, ձեր եկեղեցիներով և ձեր կրոնական-կրթական, բարեսիրական հաստատություններով, ձեզ ավելիս կուտանք, քանզի որոշած եմք մեր նոր կարգադրությամբ ի մի համախմբել ձեր բոլոր եկեղեցիները և համայնքները, հիմնելով Հայաստանյայց եկեղեցվո առաջնորդական վիճակը Հեռավոր Արևելքի երկրներու, իբրև առաջնորդանիստ քաղաքներ ունենալով Կալկաթան և Սիդնեյը:

Վստահ ենք, թե Մեր ուրախությունը պիտի բլլա նաև ձեր ուրախությունը, վասնզի այսուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հոգևոր առավել մխիթարություն պիտի կարողանա բաշխել ձեզ և առավել պիտի զորանան ձեր հոգիները լույս հավատքով, ավետարանական սիրով և հայ ոգիի ջերմությամբ, որոնք կենսագայթեն Փրկչի Իշխան Ս. Սեղանենք:

Եվ իբրև Մեր առաջին Հայրապետական պատվիրակ ձեզ կուղարկենք նոր ապատակ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, որ Մեր կողմե լիազորված է կազմակերպելու ձեր նոր հիմնված առաջնորդական վիճակը, բոլոր կանոնաց և ավանդությանց մեր Ս. Եկեղեցվույն:

Մեր սրբազան պատվիրակը՝ Տ. Ասողիկ եպիսկոպոս, ձեզմե շատերուդ ծանոթ է արդեն իբրև հավատավոր, անբասիր և անձնվեր հոգևորական, որ Քրիստոսի և մեր Ազգի սիրով ոգեշնչված, տարիներե ի վեր կծառայե մեր Եկեղեցիին և ժողովրդին հեզությամբ և կորովով: Անա թե ինչու Մենք վստահ ենք, թե դուք զինք պիտի ընդունիք սիրով և ուրախությամբ, և ձեր կարելին պիտի բնեք, որ Հայրապետական պատվիրակը իրեն հանձնված առաքելությունը հաջողությամբ կատարե ձեզ հետ գործակցաբար, մնալով այնուհետև ձեր մեջ իբրև հոգևոր առաջնորդ ձեր շրջանի բոլոր հայ եկեղեցիներուն և համայնքներուն:

Մեզ կմնա ի սրտե մաղթել, որ Տերը նոր ուժ և նոր եռանդ և երկար կյանք պարգևե Մեզ հարազատ Տ. Ասողիկ եպիսկոպոսին, որպեսզի ան կարողանա ձեր բոլորին հոգիները առաջնորդել դեպի Ս. Ավետարանին լույսը և մեր Տիրոջ ու Փրկչի սերը և խաղաղությունը, որ ճշմարիտ աղբյուրն է մարդկային երջանկության և հավիտենական կյանքին:

Ի սրտե կմաղթենք նաև ձեզ բոլորիդ, քահանա հայրեր և հավատացյալ զավակներ Մեր, քաջառողջություն հոգվո և մարմնո և երկնային օգնականություն և շնորհք, որպեսզի սիրով միաբան ապրիք, հավատարիմ մնաք մեր նախնյաց սուրբ հավատքին, մեր սրբություններուն, մեր քաղցր լեզվին, մեր Մայր Աթոռին և մեր Հայրենիքին:

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԵՂԲԱՐՔ, ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ՝ ՄԽԻԹԱՐԻՑԱՐՈՒՔ՝ ՄԻԱԲԱՆ ԼԵՐՈՒՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ. ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՑ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ»:

Հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Միածնաէջ Ս. Տաճարեն ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Հեռավոր Արևելքի հայոց թեմիդ՝ հոգևոր դասուդ, ազգային-եկեղեցական վարչություններուդ, պաշտոնյաներուդ և համայն հավատացյալ ժողովրդիդ, սրտաբուխ աղոթքով, որ մարդասերն Աստված ձեզ պահե պահպանե անփոփոխ, անվտանգ, խաղաղ ու բարօր, առաքինասեր գործոց հաջողությամբ:

«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ. ԱՄԷՆ»:

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ցուսաս կոնդակս ի 25-ե Նոյեմբերի
1957 Փրկչական տարի,
Ի Ս. Էջմիածին Հայոց Ռնէ
ի վանս Սրբոյ Էջմիածնի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻՆ

ՎԱՂԴԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԴԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՂԴԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌԱՑ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԹԵՄԻՆ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ, ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԴԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Քրիստոնեության անխոտոտակելի սյուն աստվածակառույց Ս. էջմիածնին սրտաբուխ ողջույն և հայրապետական օրհնություն տիրախնամ Միացյալ Նահանգաց Արևմտյան թեմին հայոց, հոգևոր դասուն, եկեղեցական-ազգային ժողովներուն և վարչություններուն, երիտասարդաց, կրթական, բարեսիրական կազմակերպություններուն և համայն հավատացյալ ժողովրդին:

«ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ՝ ՄԽԻԹԱՐԵՑԱՐՈՒՔ՝ ՄԻԱԲԱՆ ԼԵՐՈՒՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ»:

Սրտանց ուրախ ենք, որ ձեր հայրապետանստատ թեմը ինչպես անցյալի մեջ, նաև այժմ օրըստօրէ կզօրանա և կճառագիմե հոգևոր կյանքի շինութեան ճանապարհին վրա շնորհիվ այն սուրբ եռանդին, որով գործի լծված են ձեր հոգևոր պաշտոնյաները, դեկավար մարմինները և համայն ժողովուրդը: Մխիթարություն և պարծանք է Մեզ տեսնել ու հաստատել Մեր զավակներուն աստվածանանո այս հանդը Տիրոջ այգիին մեջ:

Ձեր եկեղեցաշեն գործի մեկ նոր ապացույցը հանդիսացավ Մեզ համար թեմիդ վերջին երեսփոխանական ժողովի օգոստոս 31-ի որոշումը, որով ձեր վիճակին համար առաջնորդ ընտրեցիք հոգեշնորհ Տ. Բաբգեն վարդապետ Վարժապետյանը, որուն բարի համբավը անշուշտ հայտնի էր դարձեր ձեզ:

Մենք հաստատեցինք այս ընտրությունը և շնորհավորեցինք ձեզ: Այլ նաև ընթացք տալով ձեր միջնորդության, որ Մեզ հայտնի դարձավ առաջնոր-

դական Աբոռիդ տեղապահ, Մեզ հարազատ Տ. Կարապետ ավագ քահանա Գալֆայանի նոյեմբեր 5-ի գրությամբ, Մայր Աբոռիս Գերագույն Հոգևոր Խորհրդի նոյեմբեր 14-ի որոշմամբ, Մենք հարմար և անհրաժեշտ դատեցինք Տ. Բարգեն հայր սուրբին շնորհել թեմական առաջնորդի համապատասխան հոգևոր իշխանություն, Մենք անձամբ ալ քաջ ծանոթ ըլլալով իր հավատավոր սրտին, իր բարի հոգիին և եկեղեցաշեն հառնդին ու հավատարմության դեպի ամենայն հայոց լույս հավատքի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Որով Տիրոջ ողորմությամբ Մենք զինք ձեռնադրեցինք և Սրբալույս Մեռոնով օծեցինք եպիսկոպոս՝ Փոքրի Իշման Ս. Սեղանի առաջ, 24 նոյեմբեր 1957-ին, ըստ սուրբ կանոնաց և ավանդությանց մեր Ս. եկեղեցվույն: Արդ, ձեր ընտրյալ առաջնորդը՝ նորապսակ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյան իր պաշտոնին կանցնի և դեպի ձեզի կուգա հոգևոր իշխանության լիությամբ:

Մենք վստահ ենք, թե իբրև ընտիր անոք, անոր հոգին նշմարտապես բացվեցավ և ան վերստին ընդունեցավ կենդանարար շնորհները Ս. Հոգվույն և այն անիմանալի ոգին, որ մեր պատմության խորհրեն կուգա, և ընդհրեեհրեն՝ Ս. Էջմիածնի հազարամյա քարերուն: Արդ, գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյան, ձեր հոգևոր առաջնորդը, ձեզի կուգա լույս բերելու Լուսավորչի անմար կանթեղեն, առավել լուսավորելու և զորացնելու համար ձեր միտքն ու հոգին, առավել հառնդով առաջնորդելու ձեզ և մոտեցնելու Աստուծո լույսին, Տիրոջ Ավետարանին և հավիտենական կյանքին:

Այն գիշեր, երբ գրի առինք այս կոնդակը, Մեր հոգին լեցուն էր խորհրդավը Ս. Գրիգոր Լուսավորչի շարշարանաց վիրապին, ուր ուխտի էինք գացեր քանի մը օր առաջ: Ս. Խոր Վիրապը, Հայոց Աշխարհի մեծ սրբատեղին, Օշականի Մեծ Սուրբի գերեզմանին հետ, պանծալի վկաներն են հայ ժողովրդի հավատքի և հանճարի լույսին, և պատվանդանը հայոց պատմության:

Եվ այսօր, երբ նորապսակ Բարգեն եպիսկոպոս ձեզ ողջույն կբերե Ս. Էջմիածնեն, ան ձեզ պիտի ավետե նաև, թե պատրաստ է նախագիծը այդ մեծ սրբավայրի՝ Ս. Խոր Վիրապի վերանորոգության, որուն իրագործումը իր վրա առած է ձեր թեմը, ձեր աստվածասեր ժողովուրդը՝ հույժ գովելի եռանդով մը գեղուն:

Երանելի Սուրբ Գրիգոր, Լուսավորիչն Հայաստան աշխարհի և հոչակյալ բազմաչարչար սուրբը համայն քրիստոնեության, կսպասե, որ իր Ս. Տաճարը վերանորոգվի ի փառս Աստուծո և ի փառս մեր սուրբ հավատքին, որուն համար ան իր շարշարանքներով երկնքի դռները բացավ և շողակաթ լույս իջեցուց իր հրաշք տեսիլքով:

Սիրելի՛ հավատացյալ զավակներ Մեր, հեռավոր Կալիֆորնիոյ ափերեն «ԵԿԱՑՔ ՇԻՆԵՍՑՈՒՔ ՍՈՒՐԲ ՉԵՒԼՐԱՆՆ ԼՈՒՍՈՅՑ. ՔԱՆՉԻ Ի ՍՄԱ ԾԱԳԵԱՑ ՄԵՋ ԼՈՅՍ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ»:

Մեր կյանքը անցավոր է. ան իմաստ ու արժեք ունի այնքան, ինչքան մենք գիտենանք մեր անունը կապել աստվածահաճո գործերու հետ, հավիտենական գործերու հետ: Այսպիսի գործ է Խոր Վիրապի վերաշինության սուրբ գործը: Մարմարյա տախտակ մը, գետեղված Ս. Լուսավորչի սրբատաշ քարերուն վրա, դարեր շարունակ պիտի հիշեցնե հաջորդ սերունդներուն՝ Ամերիկահայ հավատացյալներուն այս մեծ ընծան՝ մատուցված Աստուծո և Հայոց Ազգին:

Թող Տերը օրհնե զձեզ բոլորդ և պահե պանպանե խաղաղ, անվրդով, սիրով միաբան, առաքինասեր գործոց հաջողությամբ և ձեզ պաշտպանե

պեսպես փոբռությունններեն և հափշտակիչ անօրեն ձեռքերեն: Դուք, սիրելիներ՝, մնացե՛ք անխախտ ձեր հավատքին մեջ և սիրեցե՛ք ու մնացե՛ք հավատարիմ մեր սրբություններուն, մեր քաղցր լեզվին, մեր սուրբ իրձերուն և տեսիլքներուն և մանավանդ մշտանորոգ ու հավիտենական Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Մնացեք նաև հավատարիմ ձեզ ապաստան դարձած մեծ երկրին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներուն, իբրև օրինապահ և շինարար քաղաքացիներ, եղբայրական սիրով զեղուն դեպի այլ ժողովուրդը, որուն ծոցին մեջ կապրիք ու կհառաջդիմեք խաղաղ ու անկաշկանդ:

Հայ ժողովրդի Սրբություն Սրբոց՝ Փրկչի Իշման Ս. Սեղանեն սիրո ողջույն և բյուր օրհնություն ձեզ բոլորիդ՝ սիրելիք և ճարազատք Մեր, շերմագին աղոթքով, որ ամենակարողն Աստված ձեզ պահե պահպանե անփորձ ու անվտանգ, խաղաղ ու երջանիկ, առաքինաբար գործոց լիակատար հաջողությամբ:

«ՇՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ, ՐՆԴ ՁԵԶ ՐՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ. ԱՄԷՆ»:

ԾԱՌԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26-ն Նոյեմբերի
1957 Փրկչական ամի.
և ի տաւմարիս Հայոց ՊԵՆԷ
ի վանս Սրբոյ Էջմիածնի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՅԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԲՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԷԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ, ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԲՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ավելի քան տասնվեց դարերու փառավոր պատմություն ունի մեր Ս. եկեղեցին և անոր հիմնադիրը ու գլուխը հանդիսացող Մայր Աթոռ Ս. էջմիածինը: Ս. էջմիածինը Աստուծո պարգևն է մեր ժողովրդին տրված, որպեսզի անով ապրի, պահպանվի ու երբեք չմեռնի հայ հոգին, ժողովուրդը մեր: Փրկչի Իշխան Սեղանին վերև պլպլացող Ս. Լուսավորչի կանթեղը իր լույսը կսփռե մեր ամբողջ Ազգին վրա, մեր բոլոր եկեղեցիներուն վրա, մեր բոլոր հավատացյալներուն վրա, ուր որ ալ գտնվին անոնք: Այդ կանթեղը Աստուծո ձեռքով է վառված և անոր լույսը երբեք չի չիջիր, չի տկարանար:

Սիրելի՛ հարազատ որդիք Մեր, որ կապրիք ի Վրաստան, ձեզ ավետիս կուտանք, թե սույն հայրապետական կոնդակով Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ կնշանակենք Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, զոր

ձեր միջնորդությամբ և Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկությամբ ձեռնադրեցինք և օծեցինք եպիսկոպոս 24 նոյեմբեր 1957-ին Միածնածին Ս. Տաճարին մեջ:

Նորապսակ Տ. Կոմիտաս եպիսկոպոս շատերուդ ծանոթ է արդեն իբրև ճավատավոր և անձնվեր հոգևորական, որ Քրիստոսի և մեր Ազգի սիրով ոգեշնչված, տարիներն ի վեր կծառայե մեր եկեղեցիին և ժողովրդին: Մենք վստահ ենք, թե դուք զայն պիտի ընդունիք սիրով և ուրախությամբ, և ձեր կարելին պիտի ընեք, որ սրբազանը իրեն ճանաչված առաքելությունը հաջողությամբ կատարե, իբրև հոգևոր առաջնորդ Վրաստանի բոլոր հայ եկեղեցիներուն և կրոնական համայնքներուն:

Ի սրտե կմաղթենք, որ Տերը նոր ուժ, նոր եռանդ և երկար կյանք պարգևե Տ. Կոմիտաս եպիսկոպոսին, որպեսզի կարողանա ձեր բոլորին հոգիները առաջնորդել դեպի Ս. Ավետարանին լույսը և դեպի մեր Տիրոջ ու Փրկչի սերը և խաղաղությունը, որ ճշմարիտ աղբյուրն է մարդկային երջանկության և հավիտենական կյանքին:

Կմաղթենք նաև ձեզ բոլորիդ, հոգնանա հայեր, խորհրդի անդամներ և հավատացյալ զավակներ Մեր, քաջառողջություն հոգվո և մարմնո և երկնային զգնականություն և շնորհք, որպեսզի սիրով միաբան ապրիք, հավատարիմ մնաք մեր նախնյաց սուրբ հավատքին, մեր սրբություններուն, մեր քաղցր լեզվին, մեր Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին:

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԵՂԲԱՐՔ, ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ՝ ՄԽԻԹԱՐՆՑԱՐՈՒՔ՝ ՄԻԱԲԱՆ ԼԵՐՈՒՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ. ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ»:

Ի սրտե կմաղթենք նաև մեր դրացի վրաց եղբայրական ազգիվ ժողովրդին երջանիկ կյանք ու բարօրություն, և կաղոթենք չքնաղ Վրաստանի վերելքի ու ծաղկման համար:

«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ. ԱՄԷՆ»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն նոյեմբերի
1957 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ԹՎԷ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՓԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՎԱ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի փառասունամյակի առիթով հանձնում ենք Ձեզ Նախագահ, Մեր սրտագին շնորհավորությունները ու լավագույն բարեմաղթությունները բազմազգ Սովետական Միության՝ ամբողջ աշխարհում խաղաղության ճիշտ պատվարի՝ հետագա բարգավաճման համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՑԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանձնում ենք ընդունել Մեր սրտագին ողջույնները ու շնորհավորանքները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի փառասունհերոդ տարեդարձի առիթով: Մոսքվում ենք սովետական ժողովուրդներին խաղաղ ու երջանիկ կյանք, իսկ Սովետական մեծ Հայրենիքին՝ ճոխանար հաջողություններ իր ճիշտ վերելքի համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր ջերմ ողջույններն ու շնորհավորությունները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հառասունամյակի առթիվ: Թող ավելի ու ավելի ծաղկի և հզորանա Սովետական մեծ Միությունը և մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ բարգավաճման և խաղաղության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 40-րդ տարեդարձի առթիվ ընդունեցեք Մեր ջերմ ողջույններն ու շնորհավորանքները: Աղոթում ենք առ Աստված Սովետական պետության անսասանության և մեր մեծ Հայրենիքի երջանկության ժողովուրդների խաղաղ ու երջանիկ կյանքի համար:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և իմ անունից ճայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի փառապանծ հառասնամյակի համաժողովրդական տոնի առթիվ եղած Ձեր շնորհավորանքների համար:

ՔՈՋԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից ճայտնում եմ ջերմագին շնորհակալություն Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հառասնամյակի մեծ տոնի առթիվ եղած Ձեր շնորհավորանքների համար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 37-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ ճանեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները:

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի սրտե մաղթում ենք հայ ժողովրդին ու վերածնված Հայրենիքին անսասանություն և հարատև վերելք դեպի նորանոր հաղթանակներ կյանքի բոլոր բնագավառներում, սովետական եղբայրացած ժողովուրդների ճգոր ու փառապանծ միության մեջ, խաղաղությամբ ու բարգավաճությամբ:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ մեր բարեխնամ Հայրենի կառավարությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցեք մեր ջերմագին շնորհավորանքները Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ: Թող Տերը շեն ու անսասան պահի հայոց Մայր Հայրենիքը սովետական ժողովուրդների մեծ Միության մեջ, բարգավաճությամբ և խաղաղությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հանեցեք ընդունել մեր ջերմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած շնորհավորանքների և բարի ցանկությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Թույլ տվեք խորապես շնորհակալություն հայտնել Ձեզ Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ մեզ հղած շնորհավորությունների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽՈՆԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Զերդ Սրբություն.

Ընդունեցէք Մեր անկեղծ շնորհավորություններն ու լավագույն բարեմաղթություններեր Ձեր ծննդյան 80-ամյակի առիթով:

Հայ եկեղեցին շատ բարձր է գնահատում Ձեր ասուպածահաճո և բեղմնավոր գործունեությունը Ռուս Պրավոսլավ եկեղեցու ծաղկման, ինչպես և ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման գործում: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և արեշատություն ի փառս Ռուս եկեղեցու և հուրախություն ռուս հավատացյալ ժողովրդի:

Սիրով, Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ՊԱՏՐԱՐԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԱՐԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրտանց շնորհակալ եմ Ձերդ Սրբության շնորհավորության և բարեմաղթությունների համար:

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա սույն թվականի հոկտեմբերի 22-ին հետևյալ ուղերձը հղեց Անթիլիաս.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՀԱՐԳԱՐՈՒԹ

Մենք, Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով հոկտեմբերի սկզբի մամուլի հաղորդումներեն Ձեր որոշումի մասին՝ ամերիկահայ էջմիածնական թեմի շարք մը եկեղեցիներ Կիլիկյան Աթոռին իշխանության ներքև առնելու, Մեր վրդովումը և վիշտը կհայտնենք այս անհախընթաց ոտնձգության և պատմականորեն ստեղծված կանոններու և իրավասության սահմաններու խախտման համար:

Հանուն Հայաստանյայց եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի, այսու վճռապես կհրավիրենք Ձեզ հետս կոչել Ձեր այդ որոշումը ի սեր Աստուծո և Ազգի:

Հետևողական մեր խաղաղասիրական և միասնության ոգիին և վերջ տալու համար ներքին անիմաստ հերձումներուն և ազգակործան պառակտումներուն, միաժամանակ վերստին կառաջարկենք Ձեզ անհապաղ կերպով բանակցություններ սկսիլ որևէ հարմար տեղ, վերականգնելու համար հոգևոր միությունը և խաղաղությունը մեր նախնյաց լույս հավատքով և դարերու հերոսական մահառումներով ստեղծված ու պահպանված մեր Ս. եկեղեցվո:

Կսիրենք հուսալ, որ Ձեր դրական պատասխանը պիտի ստանանք հառաջիկա տասնհինգ օրերու ընթացքին:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի պատասխան սույն հայրապետական ուղերձի, նոյեմբերի 4-ի առավոտյան Մայր Աթոռում ստացվեց հետևյալ հեռագիրը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

ԷՋՄԻԱԾԻՆ.

Կիլիկյան Կաթողիկոսության ուղղված Ձեր Սրբության 22 հոկտեմբերի հեռագիրը ստացված է: Կեցցեն, թե Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսական դասում մեջ Զավեն կամ Զարեհ անունով եպիսկոպոս գոյություն չունի: Կիլիկյան Աթոռը եղած է և կմնա նախանձախնդիր Հայ եկեղեցվո և հայ ժողովրդի միության և համերաշխության:

Խոնարհ աղոթակից՝
Կաթողիկոսության Դռան եպիսկոպոս

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ, 2 նոյեմբեր 1957

Վեհափառ Հայրապետը հատուկ կոնդակով, ուղղված համայն հայ ժողովրդյան, պիտի ճշտի Մայր Աթոռի դիրքը Անթիլիասի և նրա հակականոնական ու եկեղեցաքանդ ընթացքի հանգեպ՝

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

5 նոյեմբերի 1957 թ.
Վ. Էմիածին

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 40-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 37-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսութեանց մեծ դահլիճում կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված պետական մեծ տոնի՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին։

Մեծ Հոկտեմբերի 40-ամյակին նվիրված հանդիսության նախագահում էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը։

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

Հանդիսավոր նիստում զեկուցեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի պատմական նշանակության և ազգերի ինքնորոշման իրավունքի և այդ թվում հայ ժողովրդի ազգային ինքնորոշման մասին՝ Հոգևոր Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս, դոցենտ Համո Հարությունյանը։

Հանդիսության ընթացքում կատարվեցին արտասանություններ, խմբերգեր և մեներգեր՝ նվիրված Մեծ Հոկտեմբերին։

Մեծ Հոկտեմբերի 40-ամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Ցահպանիչ»-ով և օրհնությամբ։

***

Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 6-ին, կառավարական հրավերով Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան շքանշանակիր օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնում Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Ասողիկ, Տ. Հայրիկ և գավազանակիր Տ. Մեսրոպ վարդապետները։

***

Նոյեմբերի 7-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, կառավարական հրավերով, Վեհափառ Հայրապետը Երևանում, Լենինի անվան հրապարակում, ներկա եղավ մեծ Հոկտեմբերի 40-ամյակի առթիվ Երևանի աշխատավորության հանդիսավոր շքերթին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազար-

յանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

***

Նոյեմբերի 7-ին, երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրավերով, Երևանում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի շենքում, ներկա եղավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ տրված պաշտոնական ճաշկերույթին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

***

Նոյեմբերի 29-ին, առավոտյան ժամը 11-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հանդիսավոր մաղթանք Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ։

Երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձին։

Օրվա մեծ տոնի նշանակության մասին զեկուցեց Հոգևոր Ճեմարանի դասախոս դոցենտ Համո Հարությունյանը։

Հանդիսավոր նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 16-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Տարին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Երևանում Կառավարական Տան մեջ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Ա. Ե. Քոչինյանին:

Ընդունելության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Ա. Ե. Քոչինյանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց Մայր Աթոռի Եկեղեցական և շինարարական աշխատանքների վերաբերյալ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶՐՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Հայաստանի հեռագրական գործակալության թղթակիցը դիմել էր Վեհափառ Հայրապետին, խնդրելով պատասխանել մի քանի հարցերի, որոնք վերաբերում էին Հայ եկեղեցու դերին, նրա իշխանության սահմաններին և մասնավորապես «Նյու-Յորք թայմզ» թերթում վերջերս հրապարակված մի թղթակցության։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց սիրով պատասխանել պարոն թղթակցի հետևյալ հարցերին.

ՀԱՐՑ—Վերջերս «Նյու-Յորք թայմզ» թերթը զետեղել էր Ջոն Ֆենտոնի թղթակցությունը, ըստ որի Միացյալ Նահանգների բոլոր Հայաստանյայց Առաքելական եկեղեցիները, որոնք իբր ընդգրկում են 300 000 անդամ, միացել են Կիլիկիայի Կաթողիկոսությանը։ Ցանկալի է իմանալ վերոհիշյալ հոդվածի կապակցությամբ Ձեր կարծիքը։

ՊԱՏԱՍԽԱՆ— «Նյու-Յորք թայմզ»-ի թղթակցի տեղեկությունները իրականության չեն համապատասխանում։ Իրականում դրությունը հետևյալն է։ Մեկ ու կես տարի առաջ Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռի ներսում ծագեցին ներքին տարաձայնություններ, որի հետևանքով այդ Աթոռի միաբանությունը և նրա ենթակա ժողովուրդը բաժանվեցին երկու մասի։ Միաբանության և ժողովրդի մեծ մասը հավատարիմ մնաց Հայ եկեղեցու գուրբ կանոններին և ավանդություններին, իսկ մի փոքրամասնություն, որ այժմ գործում է կենտրոն ունենալով Անթիլիասը, ներկայացնում է Հայ եկեղեցու ծոցում մի հերձված։ Այդ հերձվածը գլխավորող Անթիլիասի ներկա աթոռակալը անցյալ սեպտեմբերին ստացավ ձեռնադրություն և օծում՝ հակառակ Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո սուրբ կանոնների և ավանդությունների։ Անթիլիասի այդ հերձվածող և անվավեր իշխանությունն է անա, որ անհախրնթաց ոտնձգություն անելով, իր իշխանության ներքև է առնում մի քանի հայ եկեղեցիներ Ամերիկայի Միացյալ Նահանգների մեր թեմերից։ Մնացած մեր բոլոր եկեղեցիները, իրենց երկու եպիսկոպոսական Աթոռներով և գրեթե ամբողջ հավատացյալ ժողովրդով, մնում են հավատարիմ Հայ եկեղեցու բազմադարյան պատմական Ս. Աթոռին՝ ասվածակառույց էջմիածնին։

ՀԱՐՑ— Ի՞նչ է պատճառը Անթիլիասի ոտնձգության։

ՊԱՏԱՍԽԱՆ— Դա քաղաքական ոտնձգություն է մեր եկեղեցու միության և ներքին խաղաղության թշնամիների կողմից, որոնք փորձում են պառակտել և թուլացնել մեր Ս. եկեղեցին և հայ ժողովրդի հոգևոր-ազգային միասնությունը, և որոնց հյու կամակատարն է դարձել Անթիլիասի հոգևոր իշխանությունը։ Այս դավադրության նպատակն է՝ ցույց տալ, թե Ս. էջմիածինը քաղաքական վտանգավոր մի կենտրոն է և, հետևաբար, այս Ս. Աթոռին հոգեպես հավատարիմ բոլոր հայերը կասկածելի պետք է նկատվեն Արևմուտքի մեջ։

Անթիլիասի այս հայրը մի ոտնձգություն է, պատմականորեն նշված իրավասության սահմանների խախտում և հատկապես բշնամական մի ակտ, մի հարձակում բազմադարյան մեր սուրբ հավատի կենտրոնի դեմ՝ ի վնաս Հայ եկեղեցու և հայ ժողովրդի հիմնական շահերի:

Առաջիկային Մենք հատուկ կոնդակով Մեր խոսքը պիտի ասենք Անթիլիասի այս ապօրինի ե եկեղեցամեղ ընթացքի նկատմամբ:

Մենք հավատում ենք, որ մոտ ապագայում, Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի զգոնության ու ողջմտության շնորհիվ, ինչպես և մոլորված հոգևորականների վերադարձով կվերահաստատվեն միությունը և խաղաղությունը մեր եկեղեցու ծոցում՝ պատմական իրավասության սահմանների պահպանմամբ:

ՀԱՐՑ — Ե՞րբ է հիմնված Հայ Եկեղեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների մեջ։

ՊԱՏԱՍԽԱՆ— Ամերիկայում հայ եկեղեցական համայնքներ առաջին անգամ կազմակերպվեցին անցյալ դարում՝ 1889 թվականին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հունիսի 13-ի որոշմամբ: Այդ համայնքները առաջնորդական բեմի վերածվեցին և հաստատվեցին 1898-ին Մկրտիչ Ա Կարոյի-կոսի (Խրիմյան Հայրիկի) հուլիսի 2-ի հատուկ կոնդակով:

Այդ օրվանից մինչև այժմ ամերիկահայ երկու եպիսկոպոսական թեմերը, բոլոր եկեղեցական համայնքները և ժողովուրդը հոգևոր իմաստով եղել են և մնում են մեր բազմադարյան պատմական Աթոռի իշխանության ներքո: Ս. Էջմիածնից անջատված եկեղեցիները իրենց անդամներով կազմում են ամբողջ ամերիկահայ եկեղեցիների և հայ հավատացյալների շուրջ 15%-ը: Միացյալ Նահանգներում ապրում է ոչ ավելի քան 200 000 հայ:

ՀԱՐՑ— Որքան մեղ հայտնի է, Սփյուռքում ապրում են մեկ միլիոնից ավելի հայեր։ Արդյո՞ք այդ բոլոր հայերն են ընդգրկված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ Էջմիածնի ենթակա թեմերում։

ՊԱՏԱՍԽԱՆ— Արտասահմանի ավելի քան մեկ միլիոն հայության մեջ կան փոքրաթիվ կրոնական համայնքներ, որոնք հարել են Կաթոլիկ և Բողոքական եկեղեցիներին: Այդ համայնքները ամբողջությամբ վերցրած կազմում են Սփյուռքի հայության ամենաշատը 10%-ը: Մնացած հայությունը, ավելի քան 90%-ը, պատկանում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և ի օգզբանե հոգևոր տեսակետից ենթակա է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՎԵՐՋԻՆ ԿՈՆԴԱԿԸ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՇԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴՈՅ ՄԵՐՈՅ, ՈՐՔ Ի ՍՓԻՒՌՍԴ ԷՔ Ի ՋԱՆԱՋԱՆ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ՄԱՅՐ ԱՔՈՌՈՅՍ, ՆՈՅԻՐԵՄՔ ՓՐԿՉԱԻԱՆԴ ՍԷՐ, ՈՂՋՈՅՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Յաւուրս խորին ծերութեան մերոյ թախծալից սրտիւ լսեմք երբեմն, զի այլևայլ կուսակցութիւնք համազգի եղբարց ազգայնոց մերոց յայլ և այլ տեղիս կենցաղավարին ընդ միմեանս նակառակ սիրոյ, ուխտաւոր խաղաղութեան և փրկարար պատուիրանի Փրկչին մերոյ, և զի՞նչ շանին այսպիսի եղբայրատեաց սրտիւք և գործովք, եթէ ոչ կորուստ ըստ նոգւոյ և ըստ մարմնոյ, որով ոչ միայն վնասին առժամապէս, այլ ա՜ռ՝ղ, միանգամ ընդ միշտ վարկաբեկ լինին առաջի ազգաց քաղաքակրթելոց, և գտանին ի վտանգս ազգի ազգի սպառնալեաց ապագային: Եւ նրմարտիւ ասեմք, զի այսպիսի դասակարգի մերազգէից եթէ ոչ կենցաղավարիցին եղբայրական համերաշխութեամբ և սիրով, տուժել առուժեսցին զգոյութիւն իւրեանց: Եւ ո՞չ ապաքէն մինչև իսկ ի քաղաքակրթեալ ազինս և ի մեծազօր պետութիւնս գտանին կուսակցութիւնք, և չիցէ՞ բաւական լինելն նոցա Ձեզ օրինակ, զի բազմաթիւ կուսակցութիւնք նոցա կեան ընդ միմեանս ա՛յնպիսի անկեղծ սիրով և ազնուութեամբ, որպէս թէ լինէին մի ոիրտ և մի գաղափար:

Ո՜ճ, որդեա՜կք իմ սիրեցեալք, սթափեցարուք ի քմբութեանց Զերոց և ի խոր քնոյ անգիտութեան և անհեռատեսութեան, և տեսէք, եթէ յո՛ղպիսում փափուկ ժամանակի գտանիմք: Մեծ իմաստութիւն ամէն դարուց և ժամանակաց ա՛յն է, զի ժողովուրդք և ճամայնք և վարչութիւնք նոցին խելամուտ լինին ճամերաշխ սիրով և ազնիւ վարուք կեալ միշտ ընդ միմեանս յօգուտ և ի զարգացումն իւրեանց, և վասն ճշմարտութեանս պատմութիւնք ազգաց վկայ են մեզ ամենեցուն: Եւ նախագէտն ամենայնի Տէրն մեր Քրիստոս գիտէր, եթէ լինելոց էին ատելութիւնք յազգս, վասն այնորիկ զգուշացուցեալ՝ յառաջագոյն ասաց. «Պատուիրան նոր տամ Ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս». արդարև պատուիրանն այն է միշտ նոր և յաւիտենական, և այնու փրկարար պատուիրանա՛ւ ևեթ պանպանեն միշտ ազգ և ազինք զգոյութիւն իւրեանց:

Այդ՝ այսու հայրապետական կոնդակաւ մերով՝ վշտալից Հայրապետս տարաբախտ Ազգիս, որ հասեալ եմ ի մուտս արևու կենաց իմոց, յորդոր կարդամ առ սիրելիսդ մեր ամենեսեան, զի իսպառ թօրափեսջիք զատելութիւն և զմեծամտութիւն ի սրտից Ձերոց, և եղիջիք ընդմիշտ մի սիրտ և մի հոգի՝ ճամերաշխ և եղբայրական սուրբ սիրով, և գործեցէք ա՛յնպիսի խոնարհական իմաստութեամբ, զի արգասիք գործունէութեանց Ձերոց ըստ ամենայնի ո՛չ լինիցին երբեմ ի վնաս բշուառ Ազգին մերոյ, այլ յօգուտ և զարգացումն նորին:

Որոնելով զՁեզ զամենեսինդ, հայցեմք ի Պարգևատուէն ամենեցուն, զի հեղցէ ի Ձեզ զգթութիւն Իւր, և շնորհեսցէ Ձեզ սիրտ նոր և ճշմարիտ, կեալ միշտ ընդ միմեանս սիրով և միաբանութեամբ, և ազատեսցէ զՁեզ յամենայն չարաչարանաց և պարգևեսցէ կեանս երջանկաւէտս յամայր ամօք:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ի 20 սեպտեմբերի 1907 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԷ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՍԱՂՄՈՍՆԵՐ

(Առնված ձայնապնակի վրա)

Ողջո՛ւյն ձեզ, պանդուխտ որդիք հայոց, որ բախտն գձեզ Հայրենի աշխարհից վարել տարել է մինչև Ամերիկա:

Ողջո՛ւյն ձեզ Արարատյան աշխարհեն, Մասյաց Նոյան տապանեն, Էջմիածնա Ս. Տաճարեն:

Ողջո՛ւյն Ձեզ Հայոց Հայրիկեն: Ո՛ տայր ինձ, որ ավետիս տայի ձեզ իբրև Նոյան աղավնին, թե ցամաքեցավ ջրհեղեղ, դարձե՛ք ձեր Հայրենի աշխարհ: Սիրտ առե՛ք, քաջալերվեցե՛ք, անբախտ և բախտավոր պանդուխտ որդիք Հայոց, Աստուծո այցելություն մոտ է մեր շարշարյալ աշխարհին:

Ողջո՛ւյն տվեք նաև մեծ հնարիշ էդիսոնին, որ իմ կենդանի ձայնը առավ բերավ ձեզ, կեցցե՛ հավերժ ինք և յուր գյուտի հիշատակը:

Կշնորհավորեմ ձեր մուտ ի նոր տարին, կյանք և հաջողություն մաղթելով ձեզ ամենեցուն:

ՀԱՅՐԻԿ

1896 հունվար,
Էջմիածին

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈՂԻ ԱՆԵՐ*

Հողը Խրիմյանի համար կենդանի իրականություն մըն է։ Մարմին և շունչ ունի. կիսոսի ու կշարժի։

Հողը կապրի ու կրնա մեռնիլ։

Հողը կյանքի աղբյուր է, ուրկե կծնին ցորեն ու պտուղ, ուրկե կհոսին մեղր ու կաթ։

Հողը մարդկային կյանքի ալ արգանդն է. հոն կթաղվին մարդիկ, հոնկե ալ ծնելու համար։

Հողն է, որ ընտանիքին ու համայնքին անմահությունը կիրականացնե ու կտևականացնե ժամանակին մեջ։

Հողը նյութական իրականություն մը չէ միայն. հողը նյութ մըն է, որուն ընդերքնե-րեն աներևույթ ուժ մը կբարձրանա դեպի վեր, դեպի արև։ Այդ կենաց ուժը կստեղծե և՛ բուսականությունը, և՛ կենդանական աշխարհը, և՛ մարդկային իրականությունը։

Մարդը ուրիշ բան չէ, եթե ոչ այդ հողին արքայության օրգանական մեկ միավորը, մեկ մասնիկը, որ իր դիրքով կոչված է տեր դառնալու, հպատակելով սակայն հողին օրենքին։

Մարդը ուրեմն հողին վրա բացարձակ ազատ չէ, այլ հպատակն է հողին։ Մարդը հողեն կծնի, հողով կապրի ու հողին կվերադառնա։ Հետևաբար մարդուն և հողին միջև կենսաբանական անքակտելի կապ մը կա։

Մարդը հողին հպատակելով, միաժամանակ սակայն բարոյական օրենքը կհետապնդե, ու կիրագործե զայն իր անհատական ու հավաքական կյանքին մեջ։

Բնության օրենքի և բարոյական օրենքի միջև սկզբունքային հակամարտություն մը գոյություն չունի։ Այդ երկու օրենքներն ալ միևնույն իրականության երկու երեսներն են։ Բնության օրենքն է, որ մարդկայնանալով բարոյական կդառնա։

Մենք տեսանք, թե ինչպես Խրիմյանի համար հողը կրնա արքայություն դառնալ՝ մարդու իմացական ու բարոյական ուժերու ներդործության ներքև, մարդու աշխատանքի ու կազմակերպված տնտեսության մը դրության մեջ։

Ու մենք տեսանք նաև, թե ինչպես արքայությունը, երկինքը ինքը հող է, այդ նույն հողն ու արտն է։

Ահա թե ինչու Խրիմյանի համար, որ եվրոպական իմաստով փիլիսոփա մը չէ, այլ ավելի արևելքցի իմաստուն մը, երկնայինի և երկնայինի միջև չկա այն անանցանելի անջրպետը, ոչ ալ այն հակամարտությունը.

* Հատված Վեհափառ Հայրապետի դեռևս աշխարհական եղած ժամանակ, Կ. Պալճյան ստորագրությամբ, 1943 թվականին Բուխարեստում «Արիմյան Հայրիկ ուրախ գաստիարակ» խորագրով լույս ընծայած հատորից։ — Խմբ.։

որուն մասին կխոսին արևմուտքի շարք մը բարոյագետներ։

Բայց երբ հող կըսենք, պետք չէ հասկըանանք որևէ հող, այլ այն հայրենի հողը, այն բնավայրը, ուր ծնած է որոշ մարդ մը. այդ մարդուն համար հողը «իր» գյուղին, «իր» համայնքին հողն է։ Միայն և միայն այդ հողը, որ իր ծննդավայրն է, որոշ պատկերով, որոշ աշխարհագրական դիրքով, որոշ բուսականությամբ, որոշ ծաղիկներով ու կենդանիներով, որոշ հարստություններով, որոշ աշխատության ու արտադրության ձևերով, որոշ սովորություններով, երգերով, գավառաբարբառով, որոշ անցյալով, որոշ ուրախություններով ու ցավերով։

Հայրենիքը վերացական, տիեզերական գաղափար մը չէ. Հայրենիքը որոշ այն հողն է, որուն կապված պետք է մնա հայ շինականը, որ պետք է սիրե զայն իր բոլոր զգացումներու ուժովը։

Հողին սերը Խրիմյանի ըմբռնումին մեջ գիտակցական զգացում մը չէ միայն, այլ մանավանդ հոգեկան բարդ երևույթ մը, ամենախոր ու անորոշ բնազդներու արմատներեն բխած։

Մարդը պահ մը կնույնանա նույնիսկ այդ հողին հետ ու կզգա իր մեջ, թե ինք մեկ անբաժան մասն է այդ հողին։ Արյունը, որ իր երակներուն մեջ շրջան կընե, հոնկե կբխի։ Ու սիրտը, որ կբաբախե, կհետևի ավելի մեծ, խորհրդավոր զարկի մը, որուն չափը ինքը հողը կուտա։

Եվ Խրիմյան իր խոսքով ու գրչով կուզե հայուն զգացնել տալ հողին կենդանությունը, հողին զարկը, հողին արժեքը, հողին անմահությունը։

Պապիկի դասերուն ու պատվերներուն առաջին ու վերջին խոսքը հողն է.

«Այսպես, Թոռնիկ, հողն պետք է կենաց ու մահու օր, սորա համար Պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չթողուս որ ուրիշներ ձեռքեդ հափշտակեն, դու անհող մնաս, ստրուկ լինես» («Պապիկ և Թոռնիկ»)։

Եվ նորեն Թոռնիկին է, որ Պապիկ կխոսի.

«Թե մեռնիմ երթամ գերեզման և այլևս չկարեմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կթողում ձեզ դիրս իբրև ճշմարիտ կտակ և հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի, զի յուր սեփական ժառանգությունն է դրախտի երկիր, զոր Տեր Աստված մեր Ադամ պապուն և ժառանգորդներուն տվավ և ասաց գործել զերկիր և պահել» («Պապիկ և Թոռնիկ»)։

Խրիմյան ամեն գնով ու բոլոր միջոցներով կպայքարի այն հսկայական դժբախտության դեմ, որ պանդխտություն կկոչվի։

Տեսանք ինչպես տգետ, խավարամիտ ու միամիտ հայ շինականը, հուսահատած իր աղքատությենեն ու կյանքի դժվարություններեն, պանդխտության ցուպը ձեռքը կառնե, այլուր փնտռելու համար դրամ և հանգստություն։ Եվ պանդխտությունը կդառնա տեսակ մը հավաքական հիվանդագին հոգեբանություն, տեսակ մը վարակիչ համաճարակ՝ բոլոր հյուծած ու տկարացած հոգիներուն համար։

Հայ մարդուն և հողին միջև հազարամյա կապն է որ կսկսի թուլնալ։ Ու հավաքական կյանքն է, որ տակավ կսկսի կազմալուծվիլ։

Հողը կսկսի մեռնիլ։

Այս տխուր վիճակին մեկ պատկերը տալու համար մեր ընթերցողներուն, այստեղ Մշո Գեղամի հիշողություններեն կարտատպենք երկու նամակ՝ փոխանակված զարիբի մը և Հայրենիք մնացած իր կնոջ միջև։

1899-ին է, որ Սարգիս աղբարը, Մշո դաշտի Մուրադ գետի երկայնության շարված գյուղերեն միույն շինականներեն մին, աշնան առավոտ մը, առանց բառ մը իսկ ըսելու իր կնոջ ու երեխաներուն, կձգե ամեն ինչ և ճամբա կելլե դեպի Ստամբուլ։

Սարգիս դուրբաք կերթա։

Վեց ամիս հետո գյուղին ժամկոչը հետևյալ զարիբի փուսուլան կբերե Մայրամին Ստամբուլա մյուրաֆերով գրված.

«Հիսուսի Քրիստոսի ծառայի Մկրոյի Սարգսից շատ սիրով ու կարոտով բարև, իր կողակից Մայրամին, ի Մշու դաշտ...

Ամենու առաջ կպագնեմ մեր ճժերու՝ Կրպոյի և Հովոյի աչվին. շատ կարոտով բարև գյուղացոց մեծին ու պզտիկներուն։ Եթե զիս հարցնեք՝ փառք և պատիվ Տիրոջ, մինչ ի Թարիղիս սաղ սալամաթ Ստամբուլ Ղալաթիա կբանիմ մեր քեռի Կրպոյի մոտ. ու թե շիտակ կհարցնես՝ երեք հարյուր ղուրուշ էվելցեր է վրը պարտքիս. իմա՞լ էնինք. Աստծու կամքն է, հուս ունեմ, որ Աստված պրտ խնայե իր մատաղ ճժերուն, բելքիմ քանի մը փարա դատինք, իգանք, հասնինք. Մեղվա Հլոյի հետ սաքսան ղուրուշ ղրկեցի եկավ, ահա իմանաս, երթաս առնիս, զձեր պարդեր հոգաս. մեկ ալ, էս փուսուլայի ճուզարը ալալ աչալա գրես ղրկես, և ձրր ամեն եղելություն մրգի իմաց էնիս։ Տերտրու սուրբ աչը պագնեմ, այսքան։

Մկրոյի Սարգիս գրեցավ։

1890 թարիղին ապրիլ 11-ինն։

Կարդանք նաև զարիբի կնոջ՝ Մայրամի զմայլելի պատասխանը.

«Մկրտչի հարս Մայրամից սիրով ու կարոտով բարև իր կռռակից Սարգսին, իր հեռավորին, իր սևավորին...

Սա՛րգիս, քու սիրտ երկա՞թ էր, թե քար, կրակ չկե՞ր քու ներս, ձյան կտո՞ր դրեր էին հոն, և ո՞վ դրավ պաղը մեջ քու սրտին, որ օր գիշերով, թողուցիր կորար սարերու եռև. դու գիտե՞ս ի՞նչ սև ու մուր քաշեցինք, լուր այն թուղթն եկավ։ Հա կըսեն խեղդեր է, հա կըսեն մեռեր է, ես ինչ գիտնամ, հա-

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

զար տեսակ բաներ. դե գնա նստիր ու լաց. ո՞ր բան հոգանք, զքեզի՞ թե տղեկներ, որ ամեն օր անոթի կուլան... և ոմուտ ունինք, աշխարհ փախնեն, դու զմեզ պրտ չթողեր հեռուներ, քու թոնրի փոշին հազար հեղ աղեկ է քըն հըլղի շաքարն, ահա խնդիրք կէնեմ քեզնե, փունչ մը մազ ալ մեջ թղթին կդնեմ, որ դու քու անանուն Աստվածն եղնես, չկենաս ելնաս գաս, պետք չէ քու փարեն, պետք չէ քու դատում, ես ու քու ճժերն որ անոթութենե մեռնինք էլ որո՞ն կդատիս փարեն, մենե վերչ գաս, ինչ համ ու հոտ պրտ առնես, չէ՞ որ դու լե կեղնիս դարդե վարամ ու մեռնիս։

Չէ, դիմավորուկ Ս. Հովհաննես կկանչեմ, թափե էդ խելքն, դարձիր քու տուն, աշխարհ ամեն մարդ իր տնեն կապրի, հա դնա դուրս չանդ հանե, պարապ է։ Դրսու փարեն բեռներով եղնի, մեզի չի մնար, փառք Աստծու դու ալ գիտես, սաքսան զուրուշ ղրկեցի գրեր էիր, ո՞ւր է, ի՞նչ եղավ, ափսո՞ս քու քրտինքին, ափսո՞ս քու ցավին ու դարդին, սաքսան զուրուշ որ չհասնի հոս, հապա հարյուր սաքսան կամ երեք-չորս հարյուր զուրուշ. իսկի կրնա՞ս հասուս, չէ՛ աշկունքս չէ՛, արի, մի՛ էներ զէտ. արի վազ անցիր, դարձիր։ Ո՞րն է գացի զուրբաթ, հեղ մի հիշե, գեղացիք մեծ ու պզտիկ այստեղ կկանչեն իրենց Աստվածն ու դատին, Աստված ալ կուտա իրենց հաց ու թանը, քու սիրտ չա՞յրի, չվառի՞, որ խեղճ ճժեր անոթի ծարավ ասդին անդին ոլորտին ճարին, մուրան... քու պապու տուն օր հարյուր մարդ կուտեր, քո ճժեր անհաց մնան, և թե որ քու սիրտ չկտրի, ես ինչ էնեմ. Աստված թող տեսնա մեր դատաստանն ու քում, և գութ դնե քու քարե սրտին։

«Սարգսի կողակից Մայրամից գրեցավ»։

Ահա ողբերգական պատկերը պանդխտության, որ կկրկնվի հազար-հազար ձևերով Հայաստանի բոլոր գավառներուն մեջ։

Մայրամի պատասխանը կարդալով չես կրնար չզմայլիլ հայ գեղջուկ կնոջ կորովին ու գիտակցության վրա։

Եվ դեռ կըսվի, թե կինը տկար սեռն է։

Ոչ, այս պարագային գոնե, պարզ է, որ տկարը Սարգիսն է և ուժեղը Մայրամը։ Անոր միաքեն անգամ չանցնիր իր ամուսնույն ետևեն երթալ, ազատելու համար անոթութենեն ու թշվառութենեն։ Մայրամ պահպանողական դրանիտյա գիտակցությունը ունի իր հողին, իր օջախին, իր պապենական տունին։

«Քու թոնրի փոշին հազար հեղ աղեկ է քըն հըլղի շաքարն»,— կգրե ան իր մոլորած ամուսնույն ու կավելցնե.— «աշխարհ ամեն մարդ իր տնեն կապրի»։

Տղամարդու անհավասարակշռության ու փոփոխականության դեմ հանդիման կգրտնենք կնոջ կայունությունը և պահելու բնազդը։ Կինը այսպիսով հավաքական կյանքի շարունակության գլխավոր գործոնը կդառնա։

Կարդալով մեր գեղջուկ Մայրամի նամակը, հիշեցինք ամերիկացի դրագիտուհի Բիրլ Պուքի «Արտը» չինական վեպին գյուղացի հերոսուհին, որ իր ամբողջ կյանքը կպայքարի ճակատագրի ու հաճախ ալ իր ամուսնույն դեմ, պահելու համար արտը, ու կհաջողի։ Ու երբ ան կմեռնի, ծերացած ամուսինը իր կնոջ անշնչացած մարմնույն առջև կբացականչե. «Կին, դուն արտն ես»։

Այդ նույն իրականությունը կպարզվի նաև Մայրամի նամակեն, այն տարբերությամբ, որ հայ զարիբը, Սարգիսը, չունի այդ գիտակցությունը, ու իր կնոջ կանչին չի պատասխաներ ու կմնա թափառական, իմաստե զուրկ կյանքի մը մեջ։

Իսկ ասդին Մայրամ երկաթյա չիղերով կպայքարի, կաշխատի, քարեն հաց կհանե, կմեծցնե իր Կրպոն ու Հովոն և օր մը կուգա, երբ իր պատանի տղաներու շնորհիվ կվերաշինե իր տնտեսությունը։

Եվ սակայն ո՞վ գիտե, գուցե այդ Կրպոն ու Հովոն ալ վարակվելով տիրող հիվանդագին մտայնությենեն, իրենց անծանոթ հոր օրինակին հետևին ու օր մըն ալ իրենք իրենց կինն ու ճժերը ձգելով, երթան հեռու, մեռնելու համար խանի մը անկյունը...

Երիմյան իր կաթողիկոսության անդրանիկ կոնդակին մեջ (1893) ինչքան հուզումով է, որ նույն պատկերը կուտա հայ ժողովրդին, որ ան չբաժնվի այդ կյանքի հավիտենական աղբյուրեն, որմե դուրս կյանք չկա, այլ անիմաստ թափառում, այլասերում և մահ։

Ահա այդ խոսքերը, որով հայ մեծ Առաքյալը կարծես գերագույն պատգամը կարձակե հայ ժողովրդին.

«Ողջույն ձեզ, բնակիչք դաշտաց և լեռանց, շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողն և մաճ, զոչխարն և տավար, դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատատոր մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մերում. գործեցէք զերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է ձեր կեանք և զօրութիւն, միշտ չանացէք անկորուստ պահել այդ հայրենատուր ժառանգութիւնն»։

Բայց հողին սերը իր մեջ կպարփակեն նաև այն ամեն կյանքի նշույլները, որ տեղի կունենան այդ հողին մթնոլորտին մեջ, այդ աշխարհին մեջ։ Որովհետև հողը՝ գյուղական համայնքն է։

Գյուղական համայնքը ամբողջ աշխարհ մըն է, նյութական ու բարոյական աշխարհ մը, որ հողեն ծնած է ու երկնքին ջուրով ու լույսով օրհնված, որուն վրա կսավառնի մարդկային հոգիին իդեալական տենչը դեպի ճշմարիտը, դեպի գեղեցիկն ու բարին։

Ահա թե ինչու Խրիմյանի հոգի սերը տեսակ մը գյուղական կյանքի երգ երգոց է։

Գյուղական բարի կյանքի անուշությունը, հողին կանչը, այնպես, ինչպես Խրիմյան կըմբռնեի ու կներկայացնեի հայ ժողովրդին, պետք է նկատել դաստիարակչական խոշոր տվյալ մը թե՛ գյուղատնտեսության, թե՛ հայրենասիրության, թե՛ բարոյական կրթության իմաստով։

Կըսեինք, թե մարդը իր Հայրենի հողին վրա «ադատ» չէ, այլ ենթակա է հողին օրենքին։

Այդ հողին օրենքը նախ անքակտելի կապն է մարդուն և հողին միջև։ Երկրորդ՝ մարդուն գոյության իմաստն է մշակել այդ հողը ու այսպիսով կյանք տալ անոր։ Երրորդ՝ մարդը իր այդ կոչումը տեսականորեն կատարել կարենալու համար կիսգոմն ընտանիք ու համայնք, որպեսզի նոր սերունդներու կյանքին ծնունդ տալով, ասոնք ալ իրենց կարգին մշակեն ու կենդանի պահեն այդ հողը։

Ամեն շինական ուրեմն, իր ամբողջ կյանքի տևողության համար, պետք է կապվի մեկ կոդմեն հողին, ու մյուս կոդմեն կնոջ մը։

Որովհետև կինը ևս տեսակ մը արտ է։ Այդպես կըմբռնեի Խրիմյանն ալ։

Հարսանիքեն հետս Պապիկը հետևյալ խոսքերը կուղղե Թուռնիկին.

«Ահա Թոռնիկ հարսնեորներ ցրվեցան, մնացինք ես, դու, մամիկ ու Նորեկ Շուշան. մեր փոքրիկ ընտանեկան թվույն վերա մի հատիկ ավելցավ. Աստված այդ մի հատիկն իրեն ցորենահատ ցանեց մեր ընտանեկան անդաստանին մեջ, դու պիտի տեսնես Թուռնիկ, թե այդ մի հատիկ մայրենի սերմեն, որչափ մանկահատիկներ պիտի բուսանի. մի որ կտեսնես, որ տունն լեցված է լուսերով, աղջիկներով, որոնք թաչնոց ձագերուն պես՝ ճիվ-ճիվ ձայն հանելով, բերան բացած՝ պիտի ադադակեն, «Պապո, հոց կուզենք, հա՞ցս։

ԿԵՐԹԻՉՆԵՐ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԵՍԻՆ

... Հայ կրթական հիմնարկության այդ կարևոր ձեռնարկով, զոր ամեն գնահատումի վեր կհամարինք, կհավատանք, թե «Հայոց Հայրիկ»-ին ցիրուցան հատորներով լույս տեսած գործերը միության մը վերածվելով, հայ հանճարի մը ճառագայթումը մշտնջենավորելու նվիրական պարտականությունը կկատարվի, անկորուստ պահպանելու այդ գրական թանկագին նշխարները, և անոնցմով վերապրեցնելու համար մեծ հովիվը իր ժողովրդին մեջ։

Գուցե ոմանք տակավին կանուխ նկատեն «Խրիմյան»-ը վերապրեցնելու պետքը, քանի որ անոր հասարակաց հմայքը դեռ չէ ջընջված այն կուրծքերեն, որ անոր շունչովը բաբախեցին. ու դեռ ապրող սերունդ մը կա մեր մեջ, որ անոր կյանքն ու գործերը կպատվե կենդանի պաշտումով մը, դեռ վարագթև Արծիվին թռիչքը կհածի մեր մթնոլորտին մեջ, իր լուսավոր ստվերը դեռ բաժնված չէ մեր արևեն, դեռ իր ձայնն ու հառաչքները, իր երգերն ու պատգամները չեն մարած, չե՞ն մոռցված։

Սակայն ժամանակը, ամերիկահայ գաղութին մեջ մանավանդ, գուցե օր մը ավելի առաջ անտեսել տա մեր իրականությունը կենագործող ամենեն արդյունալից կյանքերն անգամ քան այլուր, ցորչափ ընկլուզիչ քաղաքակրթության մը պահանջները հետզհետե բռնանան հայ ճակատագրին, ցեղին ու լեզվին, պատմության ու հավատքին վրա։ Այս լուռ սպառնալիքին դեմ ի՞նչ ավելի զորեղ, ի՞նչ ավելի փրկարար դեր մը կրնա ստանձնել Հայ կրթական հիմնարկությունը, քան այն նվիրումը, որով իր շուրջը շնչող նոր սերունդին և հետնորդներուն համար բարոյապես կգտեպնդվի, որպեսզի անոնք չմոռնան իրենց մայրենի լեզուն, չմոռնալու համար Սահակեն մինչև Խրիմյան, Վարդանեն մինչև Անդրանիկ խորաքանդակ դրոշմրված տոհմային պատմության կարկառուն էջերը։ Այս չքնաղ նախահոդության տեսլանքը, որով զգածված է Հայ կրթական հիմնարկությունը, մեր համոզումին ու հավանության բոլոր ուժովը կդրվատենք, ու կհրավիրենք ամեն հայ անհատ, որ իրավունք համարի ազգին մեծ մարդերովը պարծելու, կհրավիրենք, այո՛, որ կարդա մեր կյանքի տեսաբանության նոր Սամվելը, մեր իմաստության Սիրաքը, մեր ոգերուն Երեմիան, մեր ընտանեկան դրախտին ավետարանիչը, մեր հայ թռնիկներուն մեծահավատ Պապիկը, ազդվելու անոր հրահանգիչ և հայրենանվեր խոսքերեն։

Հայրիկի գրվածները, թեև գրական արվեստի հրապույրը չունին, սակայն չենք կրնար ուրանալ, թե անոնք իրենց պարզ, բայց խորունկ արտահայտություններուն մեջ կպահեն բնական ու սրտառուչ գեղեցկություն մը։ Մանավանդ որ մեր ամոթխած ու հայրենաբաղձ բարքերուն նկարագիրը, զոր հայրական ջերմ զգացումներով ու կիրթ փորձառությամբ կավանդե մեզի, դասեր են, որոնք չեն կրնար իրրև զողանչյուն բախել մեր ականջները, այնքա՞ն հնչուն է և թրթռուն Հայրիկի սրտին. վրդովեցուցիչ զանգակին պղինձը։ Մեր կյանքին գիրքը պիտի կարդանք իրմով, իր մեջ ծրարված անցյալ մը վերհիշելու համար ի պատիվ մեր ցեղին։

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(Հայ կրթական հիմնարկության fառատուդարին ուղղված նամակից։ Տե՛ս «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ», Նյու-Յորք, 1929 թ.)

***

... Հո՛ն է հիմակ իր հողակույտը, Էջմիածնի Կաթողիկեին հովանավուն տակ, առընթեր Աշտարակեցվույն շիրմին։ «Մանուկ մը,— ինչպես պիտի ըսեր բանաստեղծը,— երկու քայլով կրնա չափել զայն», անբովանդակելի մեծության աճյունացյալ այդ մնացորդը. բայց ո՞վ կարող է կշռել մեծությունը իր հիշատակին։

... Իբրև եկեղեցական կարգն ազգային գործիչ, պիտի զուգակշռվի միշտ երկու ներ-

սեսներուն՝ Աշտարակեցիին ու Վարժապետյանին հետ, ու անոնց նման, պիտի մնա մեր պատմության նոր ժամանակաց ամենեն թանկագին փառքերեն մին։

Անտարակույս, Հայրիկ չունեցավ այդ երկուքեն ո՛չ առաջինին ռազմական ձիրքերը և ոչ երկրորդին դիվանագիտական շնորհքները. իր կազմվածքին բերմունքն էր այդ. բայց գլեց գերազանցեց զանոնք հեղափոխական ավյունի հորդահոսան հեղեղումովը, որուն անցամաքելի աղբյուրներն եղան իր խոսքն ու գրիչը, և իր կյանքն իսկ համակ, և այս՝ տուրքն էր իր հոգվույն։

... Պարզ կյանքի մարդ, զգացումի և գաղափարի մարդ, բայց հավետ գործի և սկզբունքի մա՛րդ եղավ նա, ավելի կամ նվազ աստիճանով մը, իր բոլոր ասպարեզներուն մեջ, Վարագի վանահայրությենեն մինչև էջմիածնի կաթողիկոսությունը, մինչև իր վերջին շունչը։

Սրտի և կամքի իր այդ անփոխանակելի առավելություններուն շնորհիվ էր, որ էջմիածին՝ Հայաստանյայց եկեղեցվո պաշտոնավայրը, Խրիմյանի օրով իսկապես եղավ հայ ազգային կյանքի կեդրոն, որո՛ւն ուղղվեցան բոլոր նայվածքները, որո՛ւն մեջ ամեն հայ կթվեր լսել ի՛ր իսկ սրտին բաբախումը՝ պաշտված Հայրապետի մը սրտին մեջ։

Անցա՜ծ են հիմա այս ամենքը. պաշտոնական աթոռներու և վարչական դիրքերու վրա Հայրիկի թողած հետքերեն՝ Պոլսո Պատրիարքարանին մեջ թերևս նկար մը միայն ու էջմիածնի գավիթին մեջ տապանաքար մը կմնան այժմ, ժամանակակիցներու հիշողության մեջ պահված հույլ մը մանրադեպերու հետ, որոնք չենք գիտեր, թե որքան կրնան ապրիլ տակավին։

Բայց կա բան մը, որ պիտի տևե ընդերկար, որուն մեջ Հայրիկի անունն ու հոգին պիտի ապրին մշտապես. իր դրական գործե՛րն են անոնք լավագույն և մեծագույն նիշատակարանը, որ պիտի անմահացնե Խրիմյանի նիշատակը, է ա՛յն՝ զոր ինքն իսկ կերտեց իր գրիչովը. իր գրականությունը։

Իր գույգ «Հրավիրակ»-ները, իր «Արծիվ»-ն ու «Արծվիկ»-ը, «Մարգարիտ»-ն ու «Խաչի նաո»-ը, «Վանգույժ»-ն ու «Հայգույժ»-ը, «Ժամանակ և խորհուրդ յուր»-ը, «Դրախտի ընտանիք»-ը, «Սիրամ և Սամվել»-ը, «Պապիկն ու Թոռնիկ»-ը հայ մատենագրության ազգայնական բաժինին մեջ պիտի ունենան իրենց ինքնուրույն տեղը, և անմոռաց պիտի թողուն Խրիմյանի անունը։

... Պիտի ապրի այդ գրականությունը. արցունքով և սփոփանքով պիտի կարդան զայն ապագա սերունդները, վասնզի հայ հոգվույն ամենահարազատ ցոլացումն է ան, բազմակողմանի շնորհներով գեղեցկացած իմացականությենե մը պրիսմակված։

Ամենքը անոր մեջ պիտի տեսնեն ամենեն հինավուրց ցեղի մը ամենեն ազնվական տիպարներեն մին, որ գաղտնիքն ունի սրտերը հմայելու։

Մեկը անոր վրա պիտի ճանչնա իր երազին մտապատկերին առչև ունայնացած դերվիշը, մյուսը՝ Աստվածաշնչի ներգործությամբը առլցուն և տեսիլքի տեսիլք հափշտակվող մարգարեն, ոմանք՝ պատվական ուսուցիչը, ուրիշներ՝ հայրենանվեր գործիչը և անառիկ գաղափարի մը անկեղծ առաքյալը, ու ամենքը՝ գութի, սիրո, բարության և իմանդաստանի մարմնացյալ անհատականությունը, որ միակ անուն մը ունեցավ, Ազգին ծոցեն, ժողովրդին սրտեն փրթած բառ մը. ՀԱՅՐԻԿ։

Այս անունը ամենուն մտածությանը մեջ պիտի գծագրե քաղցրությամբ օծուն դեմք մը, շրջանակված խորհրդապատկերներու շարքով մը, որուն կազմիչ տարրերը պիտի ըլլան խաչքարի մը շուքը, կաթողիկեի մը կիսաստվերը, հովիվեն գրկված գառնուկ մը, արտորի մը մաճը, փետուրե գրիչ մը, որ արծվեկտուց կաղամարի մը մեջ է թաթխված և խաչանիշ արտախուրակներ։

Իր գրքերեն հատվածներ պիտի կարդացվին եկեղեցվո մեջ, իր մահվան օրը պիտի հիշատակվի. կրոնքին ու Ազգին երախտավոր գործիչներու շարքին մեջ։

Ու նայելով սփոփված Հայաստանի պատկերին, զոր ամեն հայ պիտի ունենա իր տան մեջ Հայրիկի պատկերի դիմացը, ամենքը պիտի ըսեն յուրովի.

— Վախ որ չհասավ այս օրերուն։

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՇԱԿՅԱՆ
(«ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ», Փարիզ, 1951 թ.)

***

... Խրիմյանը յուր կյանքում շատ անդամ մեծ գումարներ ձեռք ձգեց, բայց նա մնաց միշտ աղքատ, միշտ պարտքերի տակ խրված։ Խրիմյանը խիստ անփույթ էր դեպի յուր անձնական վայելչությունը, դեպի յուր բարեկեցությունը. նա յուր վերա ոչինչ չէր վատնում, իսկ բնավորությամբ, եթե կարելի է այդպես կոչել, կոմունիստ էր։ Նա որպես անհաշիվ կերպով ստանում էր, նույնպես անհաշիվ կերպով սպառում էր։ Հանդիպած աղքատին Խրիմյանը պատրաստ էր յուր վերջին փարան տալ և ինքը սոված մնալ։ Սեփականությունը նրա համար ոչինչ նշանակություն չուներ, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին։ Խրիմյանը չէր ծնված բարձրը կոչման համար, որ Պատրիարքական Աթոռի վերա փտեցներ յուր կյանքը, և ձեռ-

քը, որ սովոր էր մուգանների շնորհած քնարը հնչեցնել, պարապեցներ քաղաքական և կրոնական ժողովների վճիռները ստորագրելով։

Խրիմյանը հոգով բանաստեղծ է, իսկ սրբությամբ առաքյալ։ Նա հիշեցնում է մեզ հին-գերորդ դարու անձնուրաց արեղաներին, որք հոգևոր զինվորության ցուպը ձեռքներնին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտըտում էին Հայաստանում, ուսում, դիտություն և կրոնք էին տարածում։

Խրիմյանի պատրիարքության չորս տարին անցավ խիստ անգույն կերպով։ Նա մի երևելի բան չարդյունաբերեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր։ Այլ խոսքով նա ուսած չէր դիպլոմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագետը պտտեցնում է յուր նենգավոր մեքենան։

ՐԱՖՖԻ

(«ՄՇԱԿ», Թիֆլիս, 1873 թ., № 49)

***

... Նա հայտնվում է հայության որպես Վասպուրականի մի համեստ վանքի համեստ վանահայր։ Համեստ իր սովորություններով, բարք ու վարքով, նիստ ու կացով, մարդկանց հետ պարզ վարմունքով, բայց անասելի հանդուգն, որպես դաղափարի համար մարանչող, որպես մոլեռանդ պաշտող մարդկային մտքի...։ Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հավատում է մտքի փրկարար, անհաղթելի ազդեցությանը, անպայման հավատում է խոսքի ուժին...։

... Եվ Խրիմյանը մնում է ֆանատիկոս, դաղափարամոլ, յուր ամբողջ կյանքի ընթացքում մինչև յոթանասուն երկու տարեկան հասակը։ Միայն այդ տեսակ համոզվածները կարող են ժողովրդական մարդիկ լինել, դրա մեջն է Խրիմյանի ժողովրդական մարդ լինելու գաղտնիքը։

... Մեր դեպի մարդկություն, ուրեմն և սեր դեպի յուր Ազգը, հավատ դեպի արդար մտքի ուժը. ահա այդ ժողովրդական մարդու նշանաբանը։

... Խրիմյանը օպտիմիստ է, լավատես է այդ բառի բուն քրիստոնեական մտքով. նրա համար չկան վատ մարդիկ աշխարհի երեսին, այլ կան միայն մոլորված մարդիկ...։ Նա միշտ անհիշաչար է..., համառ է յուր մտքերի, յուր դաղափարների, յուր դավանած սկզբունքների մեջ։ Նա մազի չափ չի շեղվի իր սկզբունքներից... մի քարյա սյուն, որին ոչ հողմը, ոչ էլ մրրիկը չեն կարող շարժել յուր ամուր պատվանդանից։

Մանուկ և հսկա, հեզ և վիթխարի. ահա Խրիմյանի պատկերը։ Հավատալ խոսքի ուժին, հավատալ մտքի անհաղթելի ազդեցությանը, հավատալ ճշմարտության, քրիստոնեական դաղափարի վերջնական հաղթությանը. ահա Մկրտիչ Խրիմյանի նշանաբանը, նրա հավատի դավանանքը։

... Որպես իդեալիստ նրա հավատը անսպառելի է, որպես բուն քրիստոնեական հովիվ, —նրա պարտաճանաչության զգացումնքը յուր հոգևոր զավակների վերաբերմամբ, նրա հոգացողությունը, յուր հողևոր հոտի մասին՝ անսահման է...»։

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

(«ՄՇԱԿ», Թիֆլիս, 1892 թ., № 23)

***

... Հայրենիքի սերը։ Դրա նյութն ունեի ես։ Բայց մի բարեպատեհ հանգամանք պետք էր, որ վառվեր և բորբոքվեր։ Խրիմյան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մեջ այդ նյութը։

Հայրիկի քարոզը ես առաջին անգամ լսեցի Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցում (Թիֆլիս)։ Կանգնած էի առջևի կարգումը։ Դեռ չէի տեսել Հայրիկի պատկերը։ Երբոր բարձրացավ բեմի վրա, դեռևս ոչինչ չխոսեցած, սոսկ այդ հայացքը իմ վրա մի չլսված տպավորություն գործեց։ Մեծն Ներսես, Սահակ Պարթև, Մեսրոպ վայրկենապես պատկերացան երևակայությանս մեջ իբր կենդանացած և առջևս կանգնած։ Սիրտս լեցվեց, բուկս խեղդվեց, բայց ամենայն ուժով զըսպեցի ինձ և տեղս ու տեղս չոքեցի, գլուխս դրի գետնին, երկու ձեռքիս մեջ և խեղդված հեկեկանքով հոգդ արտասուք թափեցի։ Նա սկսեց խոսել, բայց ես չէի իմանում ոչինչ, իմ հոգին իր բոլոր զգացումներով թռել էր Հայաստան։ Ահա այս ժամանակից իմ առաջվան ցավերի վրա ավելացավ և այս ցավը և ինձ համար անբուժելի դարձավ։ Աստվածսիրություն, հայրենասիրություն և ուսումնասիրություն երրորդության պես միացյալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնությունը. այլևս ուրիշ զգացումների տեղի չտվին։ Աշխարհային փառք, պատիվ, վայելչություն բոլորովին ոչնչացան ինձ համար։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

(«ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ», Թիֆլիս, 1894 թ.)

***

Խրիմյան իդեալական բարձրաստիճան հեկեղեցականն է. անոր դեմքը շեշտակի դուրս կցայտե Հին Կտակարանեն, իր բովանդակ հուրքովը և բանաստեղծականությամբը։ Իր օծման արարողության միջոցին այնպես թվեցավ ինձի, թե Արարատի ստորոտը հնամենի ոգին տակավին արթուն կմնար։ ... Այս մարդուն ամբողջական նկարագիրը կար-

ծես թե ավելի կաղապարված է տիպարի մը վրա, քան թե քրիստոնեական նվիրապետությանը... Իրեն համար կրոնք և հայրենասիրություն գրեթե համարժեք բառեր են։

... Այս նշանավոր մարդուն հետ քով-քովի մտերմական այնպիսի հարաբերություն մը ունեցա, որ անակնկալ մը եղավ ինձի համար, ու այսպես, էջմիածնի մեջ և հաջորդ ուղևորությանս ընթացքին կրցա մոտեն ծանոթանալ Խրիմյանի կյանքին։

... Հանգստավետ օրվան մը հաջորդող առտուն, հրավեր ստացա այցելել Նորին Սրբությանը։ Երբ մենք Արարատի վրա էինք, անիկա վանք հասած էր, և այնպես կերևար, թե չէր կրցած սենյակեն դուրս ելլել, որովհետև իր վրա հիացող գեղացիները շուրջը կխռնվեին ամեն անգամ որ դուրս ելլեր։ Մինչև իսկ պարտեզը պաշարված էր գեղացիներեն, որոնք ժամերով կսպասեին իրենց Հայրիկին նայվածքին արժանանալու համար։

.. Անիկա աշխարհի ամենեն նրբամիտ մարդն է, որ ձեզի կդատե իր խելացի աչքերուն մեկ նայվածքովը։ Ձեմ հիշեր տեսած ըլլալ ավելի սիրուն և գրավիչ դեմք մը. հաճույքի սարսուռ մը ունեցա մտածելով, որ անոր քովը նստած եմ և կտեսնեմ ժպիտը, անտարակույս իր դիմագծին սովորական եղող այդ ժպիտը, որ կթրթռար իր վճիտ և թուխ աչքերուն շուրջը։ Ձայնն ալ շատ քաղցր էր, իսկ վարվելակերպը լեցուն էր մեծանձնությամբ, որուն նոին կզդար, թե ուժ կա։

Հ. Ֆ. Պ. ԼԻՆՉ

(«ԱՐՄԵՆԻԱ», հատոր Ա)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր։ Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին։ Նրանց մեջն էր ծերունի Տեր Սարգիսը։

— Հայրիկի Աչը կուզեմ համբուրել,— խնդրեց նա Վեհարանում, ու ներս թողին։

— Բարով, Տեր Հայր,— Աչը մեկնեց Հայրիկը։

— Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված։

— Ո՞րտեղից կուգաս։

— Սասունի կողմերեն, ես Ա-ի Տեր Սարգիսն եմ...

— Ա-ի Տեր Սարգի՞սը...

— Այո՛, Հայրիկ։

— Է՞...

— Ես քսան հոգուց դերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալնեցին, վառեցին. մնացի այսպես...

— Է՞ հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... այնպես եկել եմ... եկել Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում։

Երկուսն էլ լուռ էին։

— Քանի՞ որդի կորցրիր, Տեր Սարգիս,— գլուխը վեր քաշեց Կաթողիկոսը։

— Ամենքը միասին քսան, Հայրիկ։

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,— պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, Տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր։

— Ո՞ւմ վիշտն է մեծ, Տեր Սարգիս։

— Հայրիկինը...

— Դե ե՛կ, Տեր Սարգիս, մոտ եկ, այդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ։

Ասավ ու գլուխը խոնարհեց։

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր Հայոց Կաթողիկոսի՞ն... Նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը...

(Թիֆլիս, 6 (19) Նոյեմբերի 1907 թ.)

ՍԻԱՄԱՆԹՈ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ռուսահայաստանի Նահատակներու հիշատակին

Եվ արյունոտ Արարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրկոտ շունչը այսօր նորեն կենչէ:
Եվ երեկ, ո՛վ գուն, տառապանքն ու մահառումն աստվածացած սրբազան
Սերունի,
Քու հեռավոր ու անծկալից Վենետանիդ պատշգամներեն,
Բազուկներովդ բշնամիին ռմբակներուն վրա սարսեցուցած,
Քու ընդվզումի բոցավառ և օրհնյալ ջահերդ՝ այսօր,
Մեր ամենուն պաշտամունքով և անձնվիրությամբ առյգված աչքերն...
Նորեն Քեզի կդառնան, նորեն Քեզի կուխտավորվին...
Ոտքի կանգնե՛ Վենափառ, ոտքի կանգնե՛ ո՛վ քաղցրաբեն Հայրիկ
Եվ հուսադրե զմեզ. Քու ավետարանական խոսքերուդ զորությանը ծարավը
ունինք.
Նորեն զմեզ փոքրակե՛, նորեն զմեզ գինովցո՛ւր, նորեն զմեզ խրախուսե՛.
Հրովնետև այսչա՜փ մահառումներեն ի վեր, այսչափ արյուններեն ի վեր,
Զավկրներուդ մտածումը, նայվածքները և հոգին
Ըմբոստացումին ուխտված ճանապարհին քարերուն վրա,
Քու բացակա քայլերուդ և ոսկիե զավազանիդ հնչյունին սպասեցին...
Ոտքի կեցիր, ոտքի կեցիր, ո՛վ զաղափարի և ազատության ջահակիր,
Հրովնետև Քեզի հետ ենք Հայրիկ. Քեզի հետ ենք մարդարե, Քեզի հետ ենք
Վենափառ.
Տե՛ս, Քու ցիրուցան զավկրներդ կործանումի ձայներեն ըմբոստացած,
Բոլորը մեկ դեպի նոր ու փրկարար Շավարշաններեր կքալեն,
Եվ Բզնունյաց ծովը մրրիկովն իր ալիքներուն, քու կերպարանքդ կաղերսե,
Ոտքի կեցի՛ր մեզի հետ. ոտքի կեցիր միրաբար. ո՛վ հերոսական Հայրիկ.
Եվ Քու երբեմնի սուրդ և այսօրվան խաչդ նվիրական՝
Երկուքը մեկ այերին մեջ ամբարձելով, Աստծուդ նայվածքներուն զալարե,
Եվ դառնությամբ կամ քաղցրությամբ Անոր հարցուր որ ընտրե...
Ես գիտեմ, որ Հրեղենը. արշալույսին մեջեն պիտի գոռայ...

. . . . . .

—«Արծի՛վ. Քու հինավուրց Սուրդ այսօր նորեն մերկացուր»

. . . . . .

Եվ արյունոտ Արարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրկոտ շունչը հավիտենապես պիտի հնչե...

1904, Փարիզ

Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԽՐԻՄՑԱՆ ՀԱՑՐԻԿԸ

Սեպտեմբերի մեջ, 1901 թվին, այցելեցի Ս. Էջմիածին։ Նույն թվի մայիսին, երբ Վենետիկ էի, մեղ ամենիս սիրելի հայր Ղեոնդ Ալիշանը իմ վրա քաղցր պարտք դրեց «Հայոց Հայրիկին կարոտագին ողջունելու իմ կողմանեն։

Մի երեկո անմոռանալի բախտ ունեցա Հայրիկի մոտ լինելու և համբուրելու նրա Աչը։

Սիրտս ուժգին խփում էր հուզմունքից և ուրախությունից։

Առաջարկեց նստել։

— Վեհափառ Հայրիկ,— ասացի ես,— մեծ բախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել Նահապետ Ալիշանի կարոտագին ողջույնները Հայոց Հայրիկին։

— Ա՜հ, շատ շնորհակալ եմ։ Դուն Վենետի՞կ էիր, ե՞րբ էիր հոն, ի՞նչպես է Հայր Ղեոնդը, աղե՞կ է։

— Այո՛, Վեհափառ Հայրիկ, այս գարնանը Վենետիկ էի և պատիվ ունեցա մի քանի անգամ լինելու ալեզարդ Նահապետի մոտ։ Նա հիվանդոտ է և թույլ...

— Ափսո՜ս, ափսո՜ս,— խոսքս ընդհատեց Հայրիկը,— մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ դրիչ ունի։ Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա ինձ շատ բան է ներշնչեր։ Ասա՛, ուրիշ ի՞նչ կըներ։

— Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մեծ է, և ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովրդին այցի է գնում...

Միշտ նախանձում էր Զեզ, Վեհափառ Հայրիկ, և ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև Մասիսի շուքին ներքո է բնում, հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի շուրը խմում։

Այստեղ Հայրիկը ուրախ և սրտանց ծիծաղեց։

— Ան կնախանձի ինձ. ես վաղը կարդադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն տ Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ։

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմատաններով, բայց մինչև հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ)։

— Է՜հ, դուն ալ բարով ես եկել։ Ես Կովկասի մեջ երկու բանաստեղծ կճանչնամ, ու շատ կսիրեմ անոնց, մեկը մեր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննես Թումանյանն է, իշտ, մեկն ալ դուն ես, քեզ ալ հիմա տեսա։ Դուն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու ապրյուր, վարդ ու աղբիկ կերգես...

Այստեղ Հայրիկը նորից շատ զվարթ ու բարձր ծիծաղեց։

— Շա՜տ պիտի մնաս հոս,— հարցրեց նա։

— Մի քանի օր ուզում եմ մնալ, Վեհափա՜ռ Հայրիկ։

— Է՜հ, լավ է, ամեն երեկո եկ, կխոսինք։

Գլուխ խոնարհեցի ու դուրս եկա։

Ամբողջ գիշերը ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի։ Ինձ թվում էր, որ ապրում եմ նահապետական օրերում և երջանկություն եմ ունենալ խոսելու հին նահապետներից մեկի հետ։ Հայրիկն իմ երևակայության մեջ միշտ պատմական կամ, ավելի ճիշտ ասած, առասպելական լուսապսակով էր զարդարված։ Մանուկ օրերից երազել էի տեսնել Վասպուրականի Արծվին, հայ ժողովրդի հույսերի և տենչերի կրող Հայոց Հայրիկին։

Մյուս երեկո Հայրիկը իր քարտուղար Վարդապետի միջոցով ինձ կանչեց Վեհարան։

— Է՜հ, նստե, տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ ու շատ կսիրեմ բանաստեղծություններ կարդալ։ Հոմերոսն ու Վիրգիլիոս ամենեն շատ կսիրեմ։

Ու սկսեց առույգ շեշտով անգիր արտասանել Իլիականից և Էնեականից գրաբար հատվածներ։ Այդ պահին նրա գեղեցիկ աչքերը փայլում էին երիտասարդական ոգևորությամբ։

Երազի մեջ էի զգում ինձ, այնպես իրականություն ինձ անիրական էր թվում։

— Քեզի իմ գրքերն տամ, հարկավ կարդացած կրլլաս, սակայն բանաստեղծները իրար կնվիրեն իրենց հեղինակություններն. դուն ալ քովինները ինձ կուտաս։

Եվ Հայրիկը կանգնեց իր պարթևական հասակով, գնաց մյուս սենյակը և բերեց «Ժամանակ և խորհուրդ յուրո և «Պապիկ և Թոռնիկ» գրքերը։

— Ասոնք քեզի Հայրիկեն հիշատակ։

Անհուն շնորհակալությամբ առա թանկագին նվերները՝ մարմարյա Աջը համբուրելով։

ԵՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ցուզանկար Եղիշե Թադևոսյանի
(Ս. Էջմիածնի Վեհարանի Մաղկյա դահլիճում)

Այնուհետև նա թիկն տվեց բարձերին ծալապատիկ նստելով։ Շինում էր հաստ-հաստ պապիրոսներ և իրար հետևից ծխում։ Մինչ խոսում էր անվերջ, պատմելով Վանի կյանքից, իր մանկությունից շարաճճիություններից։ Պատմում էր զանազան դեպքեր մեր մոտիկ անցյալից, նկարագրում էր իր տպավորությունները։ Ես հիացած ականջ էի դնում նրան, այնքան պերճախոս էր, և յուրահատուկ պատմող։ Նրա խոսքը համեմված էր ժողովրդական դարձվածքներով ու առածներով։

Հիշելով զվարթ դրվագներ իր կյանքից, ուրախ ծիծաղում էր. այնպես հուժկու թափով էր ծիծաղում, որ բազմոցը տակին խաղում էր։

Առհասարակ Հայրիկը շատ էր սիրում խոսել-զրուցել։ Հարց էր տալիս և պատասխանի չսպասած՝ ինքը շարունակում էր խոսել, պատմել և ծիծաղել։

Վանքում մնացի մի քանի օր ևս ու գրեթե ամեն երեկո Հայրիկն արժանացնում էր ինձ իր տեսակցությանը։ Եվ երբ մի երեկո մնաք բարևի գնացի և հայտնեցի, որ առավոտյան մեկնում եմ Էջմիածնից, նա ասաց.

— Տղաս, ամեն անգամ, երբ գաս հոս, Հայրիկին չմոռնաս տեսնել։

***

1902 թվի հունվարին ես նորից Ս. Էջմիածնի վանքումն էի, և ինձ համար կրկնվում էին նորից գեղեցիկ երեկոները։

Գնացի տեսնելու Հայրիկին։

— Է՜հ, բարով եկար, կերևի Հայրիկին կարոտեր ես, վանքի հացն ալ անուշ է։ Պատմե, նայիմ, ի՞նչ կա, ո՞ւր էիր։

Ես պատմեցի ճանապարհորդություններիս մասին։

— Ապրիս, ապրիս, համ կճամբորդես, համ կգրես։ Ես ալ այդպես եմ ըրեր։ Հա, լավ միտքս ընկավ, ես վերջին ատեններս շատ բաներ եմ գրած։ Կարդամ լսե, բայց ուղիղ և ճշմարիտ խոսե. քու անկեղծ կարծիքն ըսե, մի վախնար։ Հիմա դուն պիտի մտածես, որ Հայոց Կաթողիկոսի գրածները կարելի չէ քննադատել, կամ անոր բան մը ըսել, ինչպես մեր վարդապետները կընեն. երեսիս բան մը կըսեն, դուրսը ուրիշ։ Ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտ պիտի խոսին աշխարհիս տերերու առաջ։ Մեզ ալ աշխարհը տեր չունեց. Քրիստոս տեղ չուներ գլուխը դնելու, առաքյալները անտուն ու բորիկ ման կուգային, բայց հիմա մենք՝ անոնց ժառանգները վեհարաններու մեջ կապրինք։ Ասոր վրա բան մը գրեր եմ։

Եվ նորից կանգնեց իր պարթևական հասակով, գնաց մյուս սենյակը և բերեց մի տետր, նստեց բազմոցին, ակնոցները դրեց աչքերին և ուժեղ ձայնով սկսեց կարդալ։ Բովանդակությունը հետևյալն էր. ինքը գնում է Թադեոս առաքյալի վանքը ուխտի, թակում է վանքի դարբասը և ասում. «Բաց, Թադեոս առաքյալ, ես եմ, քո հայրդը, Գահիդ ներկա տերը»։ Առաքյալը ներսից պատասխանում է, որ ինքը գահ չունի, այդ ի՞նչ գահի մասին է խոսքը, և որ ինքը բռնակալ, իշխան չէ, որ գահ ունենա։

Հայրիկը պատասխանում է. «Մի՞թե չգիտե՞ս, որ գահդ Ս. Էջմիածնումն է, շքեղ Վեհարանի մեջ. շքեղ գահ, ծառաներ, հարբստություն»։

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսը,— ասում է առաքյալը,— անտուն էր ու ինքը ծառա։ Դուք նրա աշակերտները լեք. գնա, չեմ ընդունիլ...»։

Եվ Հայրիկին չի ընդունում առաքյալը։ Հայրիկը վերջացրեց ու սրտանց ծիծաղեց։ Այդ գրվածքի մեջ երևում էր Հայրիկն իր բովանդակ դեմոկրատիկ էությամբ։

Ապա նա տվեց ինձ գրվածքների տետրը, որ առանձին կարդամ և հաջորդ երեկո նկատողություններս հայտնեմ իրեն։

Դրանք ազատ, անհանգ այն ոտանավորներն էին, որ հետագայում տպվեցին Եդիպտոսում «Վերջալույսի երգերս» վերնագրով, բխած 82-ամյա պատկառելի գրչից։

***

Մյուս երեկո, խրախուսված Հայրիկի սիրալիր վարմունքից, մի քանի նկատողություններ արեցի, որ ոտանավորները երկար են, և լեզուն խառն է, արևելահայ և արևմտահայ բարբառների խառնուրդ։

— Այո, այո, ես ալ նկատեր եմ, որ իմ լեզուն խառնվեր է։ Կովկաս եմ ապրում, ազդվեր եմ, միշտ ալ խառն բարբառով կխոսիմ։ Իսկ որ կըսես երկար է՝ պատճառը երկար գիշերներն են,— պատասխանեց նա,— չեմ քնանար, ձանձրույթիս ման կուգամ դահլիճին մեջ, կծխեմ ու կերգեմ, այդ միջոցին ալ կգրեմ, մինչև որ քունս դա, այդ պատճառով երկար կըլլա։

— Թույլ տվեք, Վեհափառ Հայրիկ, հարցնել, ի՞նչ երգեր կերգեք։

— Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու, և Բաղդասար դպիրի սիրո տաղերեն ալ կերգեմ։ Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է, բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ տվորել եմ վաղուց Վարագա և Ս. Կարապետի ուխտավորներից։ Բայց ամենից

շատ կսիրեմ Խորենացու ոդրը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու կերգեմ։ Ինձի կթվա, թե այդ ոդրը Հայ Աղգի ճակատագիրն է ու ամեն դարու ոդրը, ինձի այնպես կերևա, թե Քերթողահայրն Մովսես այս ոդերին համար է գրել...

Հանկարծ հիշեց Նարեկացուն և ոգևորված խոսեց Նարեկի վանքի, Վանա ծովի գեղեցկության մասին, անգիր ասաց Նարեկացու աղոթքներից, պատմեց նրա տեսիլը, նրա մասին եղած ժողովրդական ավանդությունները։

— Նարեկացու կույս հոգին միայն կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց քրիստոնեությունը։— Այսպես ամփոփեց Հայրիկն իր խոսքը։

***

Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը. ցավալիորեն թույլ էր և գունատ։

— Հիվանդ է Հայրիկը,—ասաց,— շատ չի ապրի Հայրիկը... է՜հ, շատ մարդ կա պառկած հողին տակ՝ փարավոններ, արքաներ, հերոսներ, Խորենացի, Նարեկացի, Վիկտոր Հյուգո... վաղն ալ ես կպառկիմ հողին քնով։ Դուն կուգաս վանքը և Հայրիկին շիրիմը կտեսնես, կուլաս, չես լա— այդ չեմ կրնար ըսել, բայց այն ժամանակ կզգաս Հայրիկին կարոտը, հոստեղ ուրիշը նստած կըլլա ու չես կրնար Հայրիկին հետ խոսիլ ու ծիծաղել...

Տխուր նախազգացումով պաշարված, ուշի-ուշով դիտում էի նրան— արծվենի հայացքը, ուր դեռ արև կար, հոգեթով ձայնը և հնադարյան մագաղաթի նման դեղին ալը։

Զգում էի, որ վերջին անգամն եմ տեսնում նրան՝ հայ ժողովրդյան այդ մեծ զավակին։ Մի երկար ու խորին համբույրով նրա ալն առա և հեռացա մռայլ ու տխուր։

Ես հավատացած եմ, որ մինչև մահս իմ հոգում անջինջ և անաղարտ կմնա նա՝ այդ մեծ հայրենասերը։

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայացքը, նրա նվիրական ձայնը։ Այնպես խորն է ազդել իմ հոգու վրա։

Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան։ Քանի հնանա այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը։ Նա դարերի միջից պիտի նայի հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ լեզվով, նրա նվիրական իդեաներից և անմահ նպատակներից։

Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում։

(«ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ», Հայպետհրատ, Երևան, 1946 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՎԱՆ ՀԻՕՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 17-ին, կիրակի օր, Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան սուրբ պատարագ մատուցեց Մայր Տաճարում, ի հանդիստ հոգվո երջանկահիշատակ Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

Սուրբ պատարագին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, «էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, մտավորականներ, ուսուցիչներ, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչներ։

Հոգեհանգստյան սուրբ պատարագին ներկա էին նաև Խրիմյան Հայրիկի եղբոր թոռներն ու հարազատները իրենց ընտանիքներով։

Մայր Տաճարի երգեցիկ խումբը ներդաշնակ ու հանդիսավոր երգում է Եկմայյանի սուրբ պատարագը։ Մայր Տաճարի կամարների տակ մարմին է առնում Խրիմյան Հայրիկը՝ իր պարթև հասակով, մարգարեատիպ դեմքով, արծվեքիթ նայվածքով ու շնչով։ Տաճարում կարծես դեռ արձագանքում է Խրիմյանի հայրենաշունչ ձայնը... Խրիմյան Հայրիկը ապրում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի մեջ։

«Հայր մերս-ից առաջ, խոր լռության մեջ, հնչում է Խրիմյան Հայրիկի արժանավոր ժառանգի և հաջորդի սրտագին ձայնը.

«Ցանուն Հար և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

«Ցիշեցէ՛ զառաջնորդս ձեր որ խոսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալ՛ յելս զնացից նոցա նմանեցո՛ զհաւատսն»։

(ԵԲՐ. ԺԳ 7)

«ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, ՆՈՒԱՂՈՂ ՎԵՑԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ։ ԾՆԵԱԼ Ի 4 ԱՊՐԻԼԻ 1820 ԱՄՍ, ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1907 ԱՄՍ»։

Այսուհետև, Միածնեալ այս Տաճարի ճրաշակերտ զանգակատան կողքին, ասիական մարմարե տապանաքարին տակ, ամփոփված է մարմինը Հայոց Հայրիկին։ Վասպուրականի Արծիվն է, իր ոչխարը ճավեռ փակած։

Հիսուն տարիներ անցան այդ օրեն։ Հիսուն տարիներ Ս. Էջմիածինը և նայ ժողովուրդը ապրեցան որբացած իրենց Հայրիկենե։

Մկրտիչ Խրիմյան ծնավ ու իր հոգիին սնունդը առավ հայ ժողովրդի անմանուրյան ակերեն, հայ ժողովրդի տառապանքներեն, հայ ժողովրդի հավատքի և հույսի անմար կանթեղեն, որ կպպպա դարերե է վեր Փրկչի Իշման այս Մ. Սեղանին վերև:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՇԻՐՄԱՔԱՐԸ

Տակավին պատանի, իր Հայրենի հոգերուն վրա ոչխար արածեց ան իրև բարի հովիվ, և ապա իրև դասատարակ և հոգիներու մշակ, լույս բաժնեց իր շինականներուն, և երեսուն և հինգ տարեկանին Տիրոջ խաղցր լուծը իր ուսե-

ռուն վրա առավ իբրև հոգևոր մշակ և հովիվ, ամենպանելու և առաջնորդելու համար հավատացյալ հոտը Հայաստանյայց: Սիրելի՛ ժողովուրդ, երկար է պատմությունը իր կյանքին և իր ձեռաց բարի գործերուն, հայրենանվեր գործերուն: Հայ ժողովրդի ամբողջ մեծ դարու պատմությունն է այդ՝ վշտի, արցունքի, ոռնումներու, մարտնչումներու, հույսի, հավատքի, պայծառ տեսիլքի:

Եվ օր մը ալ արդար, Տիրոջ ողորմությամբ՝ հայ ժողովրդի վշտի անդունդները ու հույսի լեռները իր մեծ սրտին մեջ գրկած, և խաչը երկաթե իր ձեռքը բռնած, Գանձ բարձրացավ Ս. Լուսավորչին, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, իբրև Հայրապետ Ամենայն Հայոց: Երկար տարիներ եղավ Հովվապետ՝ բաշխելով ամբողջ, և բաշխելով բոլոր հայերուն և՛ լույս, և՛ հույս, և՛ հավատք: Եվ օր մը խաղաղ Հայրիկը Հայոց փակեց աչքերն իր պայծառ, փոխվելով երկինք: Եվ ազատագրված նյութին կապանքներեն, կենդանի մնաց ան իր հոգիով, սրտով, հսկելու համար իր Հայրենի երկրի և ժողովրդի կյանքին ու ճակատագրին վրա: Եվ դարձավ խորհուրդ, դարձավ հեքիաթ, դարձավ մարգարե, և կարապետ արքուն:

Իր կյանքի ընթացքին երկու տեսիլքներ, երկու մեծ իղձեր առաջնորդեցին գինք՝ խաղաղություն և շինություն Հայրենի Հողին, ավերակներուն, և վերադարձը պանդուխտ հայերուն դեպի Հայաստան, դեպի Նոյան տապան:

Անա կտակը Հայոց Հայրիկին.

«Ես կթողում մեր Հայրենի ժառանգությունն, դաշտեր ու հողեր, կթողում քեզ գութան երկու տավարներով, կթողում կթան կովեր ու ոչխարներ:

Թե մեռնիմ, երթամ գերեզման, և այլևս չկարեմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, անա կթողում ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ և հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի:

Այսպես, Թոռնիկ, հողն պետք է կենաց և մահու օր, սորա համար Պապիկն գքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չթողուս որ ուրիշներ ձեռքեդ հափշտակեն, դու անհող մնաս»:

Ո՞վ պաշտելի Հայրիկ մեր անմահ, տե՛ս, խաղաղ է երկիրդ քու սուրբ և Հայրենի հողդ բերրի իր կուրծքը կբանա քու թոռնիկներուդ աշխատանքով արդար, քու երազած ճարտար հնարքներովը արդի գիտության, պտուղներ տալով մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վաթսուն, մեկի տեղ հարյուր: Եվ կլեցվին ամբարները հայ շինականներու, առատ կնոջի ոսկեվազ գինին Արարատյան դաշտի և կարձրանան քաղաքները ու գյուղերը մեր շեն և համայն ժողովուրդը մեր, սուրբ տենդով գեղուն, կապրի շինելով, կշինե երգով, լույսով, երազով...

Բայց ո՞վ Հայրիկ մեր, «նվագող վշտից Հայրենյաց Հայոց», ինչպես քու կյանքիդ օրերուն, այսօր ալ տակավին կան ի սփյուռս աշխարհի ցրված պանդուխտներ, մեր աշխարհեն պոկված հայ շինականներ, հազար հազարներ...

Աղոթք Դուն հայոց Աստուծուն, Հայոց Հայրապետ, և օգնե մեզ տակարեալուս, որպեսզի կարենանք քու հոտը պահել պահպանել ամբողջ և անխոով, հեռու կորստյան հանապարհներեն, հափշտակիչներու անգութ ձեռքերեն, պահել պահպանել մեր հոտը հավատարիմ իր հավիտենական հովվին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իր մայրենի անուշիկ լեզվին, իր սրբություններուն և իր կյանքի մշտանոր աղբյուր հարազատ Մայր Հայրենիքին, մինչև օրն այն արևով լեցուն, երբ շեփորները վերստին հնչեն, և երբ փրկության լաստերը ազատ արձակվին, և դեպի երկիր դառնան պանդուխտ որդիները Մեր՝ աշխարհի բոլոր ծագերեն, բոլորը անխտիր:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ հայոց, Հայրենիքեն ներս թե ի սփյուռս աշխարհի, այսօր, այս ողբի և հույսի պահուն, հանգիստ կարդալով մեծ Հովվապետի լույս դարձած հոգվույն, անգամ մը ևս ուխտենք մնալ հավատարիմ իր հիշատակին, իր մեծ իղձերուն, ասովածակառույց այս Ս. Տաճարին՝ մեր սուրբ հավատքի կենարար ջուրով՝ ապրինք ու շինենք ի փառս Աստուծո, ի փառս Ս. Էջմիածնի, ի փառս Ազգին և Հայրենիքին մեր:

Սրբազնասուրբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն և Խրիմյան Հայրիկի լույս դարձած շիրիմեն բոլորիդ ողջույն, բոլորիդ օրհնություն՝ սիրով, կարոտով, խաղցր հույզերով:

Բարեխոսությամբ բոլոր սուրբերուն և երջանկաճիշատակ մեծ Հայրապետին՝ Մկրտիչ Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, թող Տերը զձեզ պահեն պահպանեն խաղաղ, անվրդով, սիրով միաբան, մեկ հոտ և մեկ հովիվ, այժմ և հավիտյան:

Լո՜ւյս, լո՜ւյս, խաղաղությո՜ւն և օրհնությո՜ւն և հավիտենական փա՜ռք երանաշնորհ Հայոց Հայրիկին. ամեն»:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է պաշտոնական հոգեհանգիստ՝ Խնկի անուշ բուրմունքի հետ աղոթավոր հազար սրտերից դեպի երկինք է բարձրանում սրբազան շարականի մրմունջը՝ «Որ յանէից...», ապա «Քահանայք և ժողովուրդ...», «Ցիշեա Տէր, զհոգի հանգուցեալ պատուական Հայրապետին մերոյ Տեառն Տեառն Մկրտչի առաջնոյ Խրիմեան Հայրիկի Ամենայն Հայոց և հանգո զնա ի լոյս երեսաց աստուածութեանդ քոյ»։

Դուրսը աշնանային ցինց արև է։ Երկինքը ժպտում է։ Մայր Տաճարի զանգակատան կողքին, ներսես Աշտարակեցու շիրիմին առընթեր, շիրիմն է Խրիմյան Հայրիկի։ Թաղարներով թարմ ծաղիկներ են դրված շիրիմի վրա և մոմեր, որոնք լույսե արցունքի պես վառվում են։ Ժողովուրդը, միաբանությունը շրջապատել են Խրիմյանի շիրիմը։ Հարազատները ծաղկեպսակներ են բերել, իսկ հայ ժողովուրդը՝ իր երախտագետ սիրտը։

Կատարվում է Նորից հոգեհանգստյան պաշտոն Խրիմյանի շիրիմի վրա։

Խրիմյանը չի մեռել, նա ապրում է, կապրի՝ քանի ապրի հայ ժողովուրդը։

Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ և «Հոդուց» արտասանում ի հանգիստ Խրիմյան Հայրիկի հոգու։

Ժամը 4-ին վանական սեղանատան մեջ տրվում է հոգեճաշ (թանապուր և հարիսա), որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Խրիմյան Հայրիկի հարազատները։

«Ցիշատակն արդարոց որհնութեամբ եղիցի»։



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՎԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 21-ին, հինգշաբթի օր, երեկոյան ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսության սրահում, կազմակերպվել էր հիշատակի երեկո Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակի կապակցությամբ։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ։

Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հիշատակի երեկոն բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագումով և «Տէր, կեցո» մաղթերգով, որոնք ունկնդրվեցին հոտնկայս։

Հանդեսի բացման խոսքն ասաց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ ոգեկոչելով Խրիմյան Հայրիկի քաղցր հիշատակն ու սիրելի անունը։ Դ դասարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը մի հատված կարդաց Խրիմյան Հայրիկի «Խաչի ճառ»-ից։ Ա լսարանի ուսանող Հակոբ Պոզապալյանը խոր հուզումով մեներգեց «Հայրիկ, Հայրիկ» հանրածանոթ երգը։ Բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը արտասանեց Պետրոս Դուրյանի «Խրիմյան Հայրիկ» բանաստեղծությունը։ Հոգևոր Ճեմարանի երգչախմբի կողմից երգված «Հայրիկն Հայոց» խմբերգից հետո, Խրիմյան Հայրիկի կյանքին և գործունեությանն նվիրված ընդարձակ և բովանդակալից զեկուցումով հանդես եկավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուն Հատիտյանը։ Բ լսարանի ուսանող շնորհունակ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը ապրումով կարդաց մի հատված «Պապիկ և Թոռնիկ»-ից։ Ա լսարանից Խորեն Մելիքանաջյանը մեներգից «Բուխուրիկ»-ը (երաժշտություն՝ Գուրգեն Ալեմշահի)։ Հակոբ սարկավագ Գարաճյանը արտասանեց Սիամանթոյի «Խրիմյան Հայրիկ» բանաստեղծությունը։ Ապա «Թե թե ունեի» խմբերգից հետո խոսք առավ Վեհափառ Հայրապետը, մի անգամ ևս ապրեցնելով բոլոր ներկաների սրտերում Խրիմյան Հայրիկի պաշտելի անունն ու խնկելի հիշատակը։

Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Տերունական աղոթքով։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԻ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 23-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն, Վեհափառ Հայրապետի շնորհարաշխությամբ։

Եպիսկոպոսական ձեռնադրությունը «քան զամենայն հանդէս պանծալիս արարողութեանց և ծիսից Հայաստանեայցս Եկեղեցւոյ շքեղաշուք և վայելչագարդ է», իր արտաքին հանդիսությամբ, ներքին բովանդակությամբ և իմաստով, որպես Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը։

Շարաթ օրը երեկոյան, կիրակամտի ժամերգությունից հետո, կատարվեց նորընծաների զբաղմունքին և ուխտագրությունն ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ։ Իշման Ս. Սեղանի առաջ ծերագիր նրանք ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալ ի վարդապետութիւն հաւատոց և պատուիրանաց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, չինել երբեք օրինադանց կամ արհամարհող կարգաց Եկեղեցւոյ, հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի, մինչև ցվախճան կենաց իմոց, և կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս» և Վեհափառ Հայրապետին, որ օրինավոր հայրդն է Ս. Գրիգոր Լուսավորչի, «յարգելով և կատարելով զամենայն զհրամանս որ ի Սրբոյ Աթոռոյ ասաի ի վերայ իմ դնիցին»։

Երդմնագրի ընթերցումից հետո այն ստորագրում են հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը՝ Հեռավոր Արևելքի՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ավստրալիայի, Մալայայի և Բիրմայի առաջնորդն ու Հայրապետական նվիրակը, հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Վարժապետյանը՝ Կալիֆոռնիայի թեմի նորընտիր առաջնորդը, և հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը՝ Վրաստանի թեմի առաջնորդը, որոնք վաղը պիտի ձեռնադրվեն եպիսկոպոս։

Երդման խորհրդավոր արարողությունից հետո նորընծաները բարձրանում են Վեհարան, ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

Կիրակի օրը, առավոտյան ժամը 12-ին, սկսվում է եպիսկոպոսական ձեռնադրությունը։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով և խնկարկմամբ առաջնորդվում է Իշման Ս. Սեղանի առաջ և լվացման կարգի կատարումից հետո «ելանէ ի սեղան Սրբոյն Ստեփանոսի ի դնել զսպաս խորհրդոյ պատարագին», և ապա թափորի հետ նույն սեղանի առաջ «բազմի յաթոռն»։ Վեհափառ Հայրապետի աջ ու ձախ կողմերում կանգնած են հայրապետական խորհրդանշանները կրողները, իսկ նրա ոտքերի տակ փռված է կաթողիկոսական արծվեգորգը։

«Շնորհազարդ Ս. Հայրապետ...»,—հնչում է խարտավիլակ դերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի բամբ ձայնը։ Նա օրվա հանդիսության որպես արարողապետ-խարտավիլակ հագել է «շապիկ մետաքսեայ սպիտակ պայծառ, փորուրար, զոտի ընդ մէջ և բազպան յաջ բազուկն և սաղաւարտ ի գլուխ», և «խնդրանք» է ներկայացնում Վեհափառ Հայրապետին։ Լսվում է Վեհափառ Հայրապետի պատասխանը. «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մատչիլ և ողջամիտ դիտաւորութեամբ բացահայտել մեզ զոր ինչ խնդրէքդ։

Խարտավիլակ սրբազանի հրավերով Վեհափառ Հայրապետի առաջ վկայություն են տալիս ժողովրդի ներկայացուցիչները, ապ-

մոսասացներից մինչև եպիսկոպոսները, իշխաններն ու աղքատները։

Այս ամբողջ արարողության ընթացքում նորընծաների շրթները աղոթքներ և սաղմոսներ են մրմնջում։ Խարտավիլակ սրբազանը հրավիրում է նրանց մոտենալ Վեհափառ Հայրապետին՝ ստանալու առաջին աստիճանը։ Նորընծաները ահիւ և երկիւղածութեամբ, ի ծունկս մոտենում են Վեհափառ Հայրապետին, որը մի շարք հարցեր է տալիս խարտավիլակ սրբազանին՝ ձեռնադրվողների անձնական կյանքի վերաբերյալ, որից հետո կարդացվում է նորընծաների վկայության թուղթը։ Ապա լսվում է Վեհափառ Հայրապետի քաջալերիչ ձայնը. «որովհետև այդպէս է, ածէք զդոսա յերկրորդ աստիճան»։ Կարդացվում են համապատասխան աղոթքներ, երգվում են շարականներ և նույն ձևով, աղոթքով և օրհնությամբ, Վեհափառ Հայրապետը տալիս է յոթերորդ աստիճանը։

Վերջին հարցերը շոշափում են Մայր Աթոռին, նրա ներկա Գահակալին և հաջորդներին հնազանդության վերաբերյալ խնդիրները։ «Կամի՞ք մնալ հնազանդութեամբ ի ներքոյ բարձր իշխանութեան մեծի Աթոռոյս առաքելոցն Բարթուղիմէոսի և Թադէոսի, և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և յաջորդի նորին և այնոցիկ, որք զկնի Մեր նստցին յԱթոռս յայս, և յոչ հնազանդելն ձեր յանձն առնո՞ւք նզովս յԱստուծոյ և ի Մէնջ»։

— Այո՛, յանձն առնումք կատարել զ՚հրամանս ձեր, հնազանդելով մեծի Աթոռոյս և Զեզ»,— լսվում է նորընծաների պատասխանը։

Հնազանդության այս հանդիսավոր խոստումից հետո նորընծաները Վեհափառ Հայրապետի հրամանով բարձրանում են արծվեզորդի վրա և շրջանակ կազմում Վեհափառ Հայրապետի շուրջը։ Ապա սկսվում է նրանց հավատի ուղղափառության հրապարակային քննությունը։ Նրանք վկայություն են տալիս իրենց հավատի ուղղափառության մասին, որ իրենք հավատում են տիեզերական երեք ժողովների որոշումներին և բանաձևերին, ընդունում են Հայ Եկեղեցու հայրապետահաստատ կանոններն ու ավանդությունները և իրենց հավատի խոստովանությունը կնքում են հայտարարելով.

— Խոստովանիմք և հաւատամք։

Ուղղափառ հավատի հռչակումից հետո նրանք նզովում են ամեն տեսակ հերետիկոսներին և աղանդավորներին։ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տրվում է նորընծայալներին եպիսկոպոսական աստիճանի համապատասխան եկեղեցական զգեստ՝ եմիփորոն։

Ապա Վեհափառ Հայրապետի «Զօրութիւն ամենասուրբ Հոգւոյն ի ձեռն իմոյ չափաւորութեանս» աղոթքից հետո եպիսկոպոսական ձեռնադրության առաջին մասը վերջանում է։

«ԵՍ ԴՆԵՄ ԶՆՈՍ Ի ՎԵՐԱՑ...»

Ավագ Սեղանի վրա սկսում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը, որը շարունակվում է մինչև Ճաշու դրքի ընթերցումը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը բազմում է ոսկեզոծ սուսակոցին սեղանոյնս, շրջապատված երեք նորընծաներով։ Վեհափառ Հայրապետը կարդում է ձեռնադրության աղոթքը։ Ապա նորընծաները դառնում են դեպի օյարևմուտս, դեմքերը դարձրած ունեն ժողովուրդը. ձեռքի ափերը վեր բարձ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՍՈՒՄ Է Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱԿԱՏԸ

բացրած։ Նրանք վերջնականապես հրաժարվում են աշխարհից և նրա ոմնայն պատրանքներից։

Մինչ Մայր Տաճարում վեհ ու հանդիսավոր հնչում է շարականը՝ ամենաուածային և երկնատոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ զԱստղիկ, զԲարգէն, զԿոմիտաս վարդապետսն ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն։ Այս օրհներգությունը կրկնվում է երեք անգամ։ Նվիրյալները նորից ծնրադիր շարվում են Վեհափառ Հայրապետի աթոռի շուրջ։ Նորից սուրբ աղոթք, նորից շարական ու աստվածաշնչական ընթերցումներ, սաղ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է Տ. ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱԿԱՏԸ

մոսներ, և Վեհափառ Հայրապետը դնում է իր Ս. Աջը նրանց վրա։

«Ես դնեմ ձեռս ի վերայ, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանաւոր լիցին սոքա զաստիճան եպիսկոպոսութեան անարատ պահել առաջի Աստուծոյ։

Ձեռնադրությունից հետո սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջույն»։

Օծման խորհրդավոր պահն է, որը լրումն և պսակն է եպիսկոպոսական ձեռնադրության։ Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հանդիսավորությամբ բերում է արծաթյա մեռոնաթափ աղավնին։ Վեհափառ Հայրապետը երեք անգամ ինկարկելով մեռոնաթափ սուրբ աղավնուն, վերցնում է այն

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱԿԱՏԸ

սրբազանի ձեռքից, նրանով տյառնագրում է ժողովրդին և ապա քաղցրաձայն երգում «Առաքելոյ աղաւնոյ շարականը։ Շարականի բառերի և եղանակի հնչյունների հետ կաթիլ առ կաթիլ թափվում են մեռոնի ոսկեդույն կաթիլները արծաթե փոքր մեռոնամանի մեջ։

«Օրհնեսցի և սրբեսցի և օծցի ճակատ...»,— լսվում է Վեհափառ Հայրապետի հուզումից թրթռացող ձայնը։ Ապա մեկ առ մեկ օծվում են նվիրյալների ճակատները ու բուն մատները, մինչ խարտավիլակ Հայկազուն սրբազանը նորապսակ եպիսկոպոսների գլխին դնում է եպիսկոպոսական խույրը։ Ապա համապատասխան աղոթքներով և

օրհնությամբ Վեհափառ Հայրապետը տալիս է նրանց եպիսկոպոսական գավազան, մատանի և Ս. Ավետարան։

Ավարտել է եպիսկոպոսական ձեռնադրության և օծման իրապես խորհրդավոր և հոգեպարար արարողությունը։ Ահա նրանք՝ մեր Ս. Եկեղեցու ախոյաններն ու ավետարանիչները՝ Հայ Եկեղեցու հավերժության ջահը բռնած իրենց ձեռքերին, կանգնած լուռ ու խոհուն Ավագ Սեղանի վրա, երկյուղածությամբ լսում են Վեհափառ Հայրապետի հոգելից խրատականը։

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։
«Հոգին Սուրբ նկնեցէ ի ձեզ և զօրութիւն Բարձրելոյն ճոփանի լիցի ի վերայ ձեր»։

«Սիրելի՛ նորապսակ սրբազան եղբայրներ։

Այսօր, այս Միածնաէջ Ս. Տաճարին մեջ, սուրբ պատարագի այս պահին, երբ մեր բոլորիս հոգիները կուղղվին դեպի երկինք՝ աղոթելու աղերսանքներով բազում, որպեսզի երկնքի հուսո դռները բացվին, և աստվածային շնորհը անգամ մը ևս իջնի այստեղ, Մենք Մեր սրտի խորերեն կմաղթենք, որ Ձեր հոգիները դառնան ճշմարիտ «ընտիր անոթ»-ներ և ընդունին սուրբ շնորհները ամենասուրբ Հոգվույն։

Մենք կհավատանք նյութեն անդին գտնըվող ուժերուն, որոնք կներգործեն մեր վրա, և որոնք նո՛ր ուժ, նո՛ր ջերմություն, նո՛ր

կյանք կուտան մեր էության, մեր հոգիներուն։

Աստվածային ներշնչում կամ աստվածային շնորհներ, ինչպես կուզեք անվանել, համենայն դեպս բոլոր ճշմարիտ հոգիները, այսպիսի սրբազան պահերուն, իրոք որ, ընդունած են այդ զորությունը և դարձած են նո՛ր մարդեր, երբեմն նույնիսկ այնպիսի ձևերով, որ ո՛չ միայն շուրջի մարդիկ, ժողովուրդը, այլ նաև ինքը ենթական զարմացած է, թե ինչքան փոխված է և դարձած նոր մարդ, նո՛ր ուժերով, նո՛ր կյանքի մը համար։

Դուք երեքդ՝ Տ. Աստղիկ եպիսկոպոս, Տ. Բարգեն եպիսկոպոս և Տ. Կոմիտաս եպիսկոպոս, Մեզ ծանոթ եք անձնապես, թեև ոչ երկար ժամանակ է ի վեր, սակայն այդ կարճ ժամանակի ընթացքին Մենք ճանչցանք զՁեզ։ Տեսանք մանավանդ Ձեր մեջ ճշմարիտ հոգին հավատավոր հոգևորականի, տեսանք Ձեր մեջ Հայ եկեղեցվո ծառայողի ոգին, ճշմարիտ, հավատարիմ ոգին հայ հոգևորականի, հավատարիմ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հավատարիմ դեպի իր հայրազատ ժողովուրդը, հավատարիմ դեպի իր հարազատ սուրբ Հողը Հայրենի, որուն ծնունդն ենք մենք բոլորս մարմնապես՝ ծնունդը ըլլալով միաժամանակ հոգեպես այս Ս. Տաճարին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Մենք վստահ ենք, թե այսօր, այս սուրբ Խումով և ձեռնադրությամբ, Ձեր մեջ վերջնականապես դրոշմվեցան այս բոլոր շնորհները, և Դուք առավելյալ եռանդով և առավելյալ արդյունքներով պիտի շարունակեք Ձեր սուրբ գործը, Ձեր առաքելությունը մեր ժողովրդի կյանքին մեջ՝ Տիրոջ այդիին մեջ։

Մենք կմաղթենք և բաղկատարած կաղոթենք առ Աստված, որ Տերը Ձեզ ո՛ւժ, կարողություն պարգևե, որպեսզի առաջնորդեք Ձեր հոտը, Ձեր ժողովուրդը դեպի հոգիներու փրկություն, ցույց տաք անոնց ճշմարիտ ճանապարհը դեպի Աստուծո արքայություն, ցույց տաք անոնց Աստուծո ճանապարհը խաղաղության, մարդասիրության, եղբայրսիրության, եկեղեցասիրության, էջմիածնասիրության և հայրենասիրության։ Լուսավորեցե՛ք անոնց մտքերը, մշակեցե՛ք անոնց հոգիները, և դարձե՛ք ճշմարիտ «հովիվներ առանց ամոթոյ», ճմարիտ «մշակներ առանց ամոթոյ», ինչպես կպատվիրե մեզ բոլորիս սուրբ առաքյալը Պողոս։

Սիրելի՛ նորապսակ սրբազաններ.

Մենք պիտի փափաքեինք, որ Դուք ո՛չ թե սովորական իմաստով առաջնորդներ կամ եպիսկոպոսներ ըլլայիք, Ձեր պարտականությունները կատարելով նեղ իմաստով մը միայն, այլ Մենք պիտի ցանկայինք, որ Ձեզմե ամեն մեկը դառնար ճշմարիտ, հոգևոր-բարոյական անձնավորություն մը մեր կյանքին մեջ, մեր այսօրվան պայմաններուն մեջ։

Մեծ մարդիկ, մեծ անձնավորությունները պատրաստ չեն ծնիր։ Ճիշտ է, որ հնարավորություններով կծնին անոնք, բայց մանավանդ անոնք արդյունքը կըլլան իրենց ժամանակին և իրենց կյանքի պայմաններուն, միջավայրին։ Մեծ անձնավորություն մը ուրիշ բան չէ, եթե ոչ կորովի մեկ պատասխանը, տրված ժամանակի պայմաններուն, իրադարձությանց և մանավանդ ժողովրդի պահանջներուն՝ բարոյական, հոգևոր իդեալի մը շուրջ կազմակերպված։

Ամեն մեկ անձնավորության համար բացի անհատական, հոգեկան արժեքներեն և շնորհներեն, որոնք իրենց հիմնական տեղը ունին բնականաբար, երկու առարկայական պայմաններ ևս կպահանջվին։ Առաջինը՝ Մենք կխորհինք թե այն է, ինչ որ շեշտեցինք արդեն, այսինքն ժամանակի, միջավայրի, ներկա կյանքի պայմանները, ժամանակի հղությունը։ Երկրորդ պայմանն է, որ տվյալ անձը գիտնա այդ ժամանակի և կյանքի պայմաններու մեջ, երբեմն շփոթ ու քաոսային պայմաններու մեջ նույնիսկ, զատորոշել ճշմարիտը՝ ոչ ճշմարիտեն, գիտնա զատորոշել հավիտենականը՝ անցողականեն, գիտնա զատորոշել իրավ օգտակարը՝ ժողովրդի և եկեղեցիի համար ոչ օգտակարեն, մանավանդ գիտնա իր ամբողջ աշխատանքը և գործունեությունը դասավորել պատմության գծին վրա, պատմության հորիզոնին վրա, տվյալ եկեղեցիի և ժողովրդի ծոցին մեջ։

Շատ անգամ, իմացական բացառիկ կարողությանց տեր մարդիկ, մեծ անձնավորություններ դառնալու բոլոր անհատական տվյալները ունենալով հանդերձ, սայթաքած ու ձախողած են կյանքի մեջ, որովհետև չեն կրցած ճշմարիտ իդեալը ընտրելու խնդիրը իրենց ձեռքը առնել լուծելու համար զայն, և առաջնորդված են կեղծ խնդիրներով, որոնք նշանակությունն և իմաստն զուրկ են ժողովրդի մը և եկեղեցիի մը պատմության հորիզոնին վրա։ Մենք պիտի չցանկայինք, որ մեր հոգևորականները, և Դուք այս պարագայիս, այդպիսիներու շարքին մեջ ըլլայիք, որոնցմե դժբախտաբար մեր եկեղեցին ունի այսօր, և որոնք վերջին շրջաններուն այնքան ավեր, այնքան տագնապներ պատճառեցին և կպատճառեն մեր Ս. եկեղեցվո մարմնին մեջ։

Մենք խորհուրդ մը կուզեինք տալ Ձեզի։ Կարենալ ընտրելու համար ճշմարիտ հարցը, ճշմարիտ իդեալը ոչ ճշմարիտեն, կեղծ

խնդիրներին, կեղծ իդեալներին, անցողական և անիմաստ, պետք է Ձեր ուշադրությունը դարձնեք, Ձեր հայացքը սևեռեք դեպի այն հավիտենական իրականությունները և արժեքները, որոնց կապելով Ձեր սիրտը, Ձեր հոգին, Ձեր գործունեությունը, Ձեր աշխատանքը, պիտի չսխալիք, պիտի չդայթակղիք երբեք և պիտի գտնեք ճշմարիտ ճանապարհը։ Այդ սրբությունները, այդ հավիտենական արժեքները Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է նախ, ապա՝ մեր Մայր Հողը, Հայաստան աշխարհը, և մեր Մայր Հողի վրա ապրող ճշմարիտ, հարազատ զանգվածը հայ ժողովրդի։

Ահա պատվեր կուտանք Ձեզ, եթե Դուք և մենք բոլորս կարենանք մեր մտածումներու, մեր ապրումներու, մեր որոնումներու և մաքառումներու, մեր աշխատանքի և մեր ամբողջ գործունեության կեդրոնը դարձնել Միածնաէջ այս Ս. Տաճարը, մեր հավատքի այս բազմադարյան սրբավայրը, մեր Մայր Հողը Հայրենի, և մեր բուն հարազատ հայ ժողովուրդը, այն ատեն մենք պիտի չսխալինք և մեր առջև պիտի բացվի իսկապես փառավոր ճանապարհ մը գործունեության և քահանայագործության։

Այսօր մեր ժողովրդի, մեր եկեղեցվո կյանքի մեջ, պատմական նոր շրջան մը սկսած է վերազարթոնքի, հոգևոր կյանքի վերազարթոնքի, եկեղեցաշինության և առհասարակ հայ ժողովրդի վերածնունդի, իր Հայրենիքով, իր բոլոր տնտեսական, մշակութային, գեղարվեստական հաստատություններով, իր գիտությամբ և արվեստով և այժմ ահա նաև իր հոգևոր կյանքով։ Ահա՝ այսպիսի պատմական ժամանակաշրջանի մը սկզբին կգտնվինք և բոլոր անոնք, որոնք իրենց հովվական և հովվապետական գավազանը բռնած և սուրբ խաչը իրենց ձեռքին՝ մեր ժողովրդի մեջ պիտի մտնեն քարոզելու, աշակերտելու, մշակելու, առաջնորդելու, լուսավորելու՝ անոնց համար ահա կբացվի ճշմարիտ փառքի ճամբա մը։

Եվ մեր Ս. Եկեղեցին այսօր պետք ունի այսպիսի նվիրյալներու։

Դուք, կխորհինք, Ձեր անձը շատոնց արդեն ընծա բերած եք Ս. Եկեղեցիին, և վստահ ենք, թե այն մտածումները և զգացումները, որ Մենք արտահայտեցինք, Ձեր սրտին կխոսին և Դուք, Ս. Հոգվո շնորհներով զեղուն, պիտի կատարեք Ձեր պարտքը դեպի մեր Ս. Եկեղեցին, դեպի Մայր Աթոռ հավիտենական Ս. Էջմիածինը, դեպի հավատացյալ ժողովուրդը և դեպի մեր վերածնած Մայր Հայրենիքը։

Թող Տերը զՁեզ պահե պահպանե հոգվով և մարմնով առողջ, անսասան և խաղաղ։ Ձեր հոգեկան ուժերը թող աճին և Աստուծո լույսի առաջնորդությամբ հետզհետե բարձրանաք և Ձեզ հետ բարձրացնեք Ձեր հոտը, մեր հավատացյալ ժողովուրդը, դեպի այն բարձունքները, որոնք հաճո են Աստուծո, որոնք հաճո են մեր Ս. Եկեղեցիին և հաճո են մեր ժողովրդին։

Գնացեք այսուհետև, աշակերտեցեք հավատացյալ ժողովուրդն մեր գլանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Աստուծո օգնությունը և հովանին անպակաս ըլլան Ձեր վրայեն, Ձեր ձեռաց գործերը միշտ սուրբ ըլլան, Ձեր ոտքերը շարժին հավատքի ուղիղ, բարի ճամբաներուն վրա, Ձեր հայացքը միշտ սևեռած մնա դեպի երկինք և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որ քրիստոնեության այնքան է մեր ժողովրդի, մեր հոգևոր կյանքի համար, և ուր երկինքը իջավ Ս. Լուսավորչի տեսիլքով։ Երկինք և երկիր, մեզի համար, կմիանան այս կետին վրա։ Արդ, ուխտենք հավատարիմ մնալ այս հավատքի վեմ Ս. Էջմիածնին։

«Օրհնեալք եղերուք ի Տեառնէ և ի Մէնջ, ամէնք»։

Նույն հանդիսությամբ սուրբ պատարագը շարունակվում է։

Հավարտ սուրբ պատարագի, Մաղկյա դահլիճում նորապսակները ընդունեցին Մայր Աթոռի միաբանության և ժողովրդի սրտագին շնորհավորությունները։

Ժամը 4-ին, ի պատիվ նորապսակ եպիսկոպոսների, Վեհարանի սեղանատան մեջ կազմակերպվել էր ընդունելություն։ Սեղանի շուրջ ստեղծվել էր ջերմ և սրտագին մթնոլորտ։

Նորապսակ սրբազաններին շնորհավորության խոսք ասացին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Ա. Տիրացյանը, հոգեշնորհ Տ. Հայրիկ, Տ. Վահան, Տ. Տիրայր և Տ. Մեսրոպ վարդապետները։ Խոսք առին նաև իրենց՝ նորապսակ սրբազանները և ջերմագին շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, խոստացան իրենց եկեղեցանվեր և ժողովրդանվեր գործունեությամբ արդարացնել Եկեղեցու և ժողովրդի խոր վստահությունը։

Ընդունելությունը վերջացավ Տերունական աղոթքով։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորապսակ սրբազաններին և ցանկանում է նրանց արդյունավետ գործունեություն։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՋԱՐՅԱՆ

Նորընտիր Տ. Ասողիկ սրբազանը, ավագանի անունով Ղազարոս, ծնվել է 1909 թվականին Բեհեսնի քաղաքում (Հորրորդ Հայք, Մալաթիա)։

Համաշխարհային առաջին պատերազմին, տարագրության արյունոտ ճանապարհին կորցնում է իր հարազատներից շատերին և որպես որբ ընդունվում է նախ Տարագրելոց և ապա Արարատյան որբանոցներում 1919—1920-ական թվերին, Մուսուլում և Բաքուպայում։

1924 թվականին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը։ Ուսումնական տարվա պատանու առաջ բացվում են գիտության դռները և խաղաղ կյանքի հնարավորություններ։ Նա հաջողությամբ է ավարտում Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժնի քառամյա դասընթացը և 1928 թվականին սարկավագ է ձեռնադրվում Դուրյան պատրիարքից և իր կյանքը ընդմիշտ կապում վանական գործունեության հետ։

Աշակերտել է Դուրյան և Գուշակյան պատրիարքներին և Բարգեն Կյոսեսերյան եպիսկոպոսին Երուսաղեմում։

1932 թվականին նա ձեռնադրվում է կուսակրոն քահանա Թորգոմ պատրիարքի ձեռքով և Երուսաղեմի Պատրիարքական Ս. Աթոռից ներս կոչվում է վանական-վարչական պատասխանատու պաշտոնների։

1936—1937 ուսումնական տարում ծառայում է Ճաֆա քաղաքի ազգային վարժարանում որպես ուսուցիչ և հոգևոր հովիվ։

1937 թվականի վերջին, Թորգոմ պատրիարքի հրամանով նշանակվում է հոգևոր հովիվ Մայրագույն Արևելքի՝ Չինաստանի, Մանչուրիայի, Ճապոնիայի։

Ասողիկ վարդապետը մեծ եռանդով և անձնվիրությամբ ծառայում է հայ ժողովրդի այդ հավատացյալ բեկորներին և մեծապես սիրվում ու հարգվում։

1941—1945 թվականներին Ասողիկ վարդապետը բանտարկվում է ճապոնացիների կողմից Խարբինի համակենտրոնացման ճամբարում, և երբ Սովետական Բանակը հասնում է Մանչուրիա, ազատվում է և վերադառնում իր հոգևոր պաշտոնին։

Երկար և արկածալից բացակայությունից հետո, 1950 թվականին վերադառնում է Երուսաղեմ, իր միաբանության գիրկը, մի

քիչ հանգստանալու։ 1951 թվականին հովվական պաշտոնով հրավիրվում է Կալիֆոռնիայի Լոս-Անջելոս քաղաքը, ուր պաշտոնավարում է երեք ու կես տարի։

1954 թվականին նա նորից Հեռավոր Արևելքումն է, այս անգամ Ավստրալիայում, որպես հոգևոր հովիվ։

1957 թվականի սեպտեմբերին ուխտի է գալիս Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

1957 թվականի նոյեմբերի 24-ին եպիսկոպոս է ձեռնադրվում և նշանակվում Հայրապետական Նվիրակ և առաջնորդ Հեռավոր Արևելքի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ինդոնեզիայի, Ավստրալիայի, Մալայայի և Բիրմայի։

Ասողիկ սրբազանը քաղցր հոգի և բնավորություն ունեցող, հավատավոր և նվիրված մեր լավագույն հոգևորականներից մեկն է։ Նա դտնվում է իր ուժերի ծաղկման և գործունեության հասուն շրջանում։ Մայր Աթոռը և Հայ Եկեղեցին ու ժողովուրդը նրանից սպասում են նոր ծառայություններ։

Մեր բոլորի հավատն այն է, որ սրբազանը կարդարացնի այդ վստահությունը։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Նորապսակ Տ. Բարգեն սրբազանը, ավազանի անունով Արմեն, ծնվել է 1918 թվականին, դաղթականության շրջանում, այնթարցի ծնողներից։

Սրբազանի ծնողները, որոնք դեռ ողջ են, երկար տարիներ նվիրումով ծառայել են Այնթաբում և Հալեպում որպես կրթական մշակներ, հայ նոր սերնդի դաստիարակության գործում. Հատկապես սրբազանի մայրը, համեստ կոչումով իր շրջանակում ծանոթ որպես Մարիամ վարժուհի, 1896 թվականից նվիրվել է հայ իգական սերնդի դաստիարակության շնորհակալ գործին։

Սրբազանն իր նախնական կրթությունն ստանում է Հալեպում, իր ծնողաց ղեկավարած անձնական և հանրածանոթ «Արմենյան» վարժարանում։ Ապա 1927—1932 թվականներին սովորում և ավարտում է Հալեպում Կրթասիրաց վարժարանը և նույն տարին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան։

Խոստումնալից և ուսումնատենչ Արմենը Ս. Երուսաղեմի վանական մթնոլորտում խորանում է գիտելիքների մեջ և թրծվելով, 1936 թվականին սարկավագ է ձեռնադրվում Թորգոմ պատրիարքից 11 ընկերների հետ։

1939 թվականին Արմեն սարկավագը, մեծ հաջողությամբ ավարտելով Ընծայարանի աստվածաբանական դասընթացը, մեկնում է Բեյրութ, ուսանելու համար Մերձավոր Արևելքի Ամերիկյան Աստվածաբանական ճեմարանում։

1941 թվականին նա անդամակցելով Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիայի միաբանության, կուսակրոն քահանա է ձեռնադրվում Անթիլիասի Մայր Տաճարում և վանքում նվիրվում ուսուցչական գրական աշխատանքների, մինչև 1946 թվականը, որպես դաստիարակ և կիրակնօրյա դպրոցների տեսուչ։

1946 թվականին մեկնում է Ամերիկա՝ համալսարանական ուսման հետևելու։ 1950 թվականին, վերադառնում է Անթիլիաս ապսակավոր աստվածաբանության տիտղոսով։ ԱՄՆ-ում հղած ժամանակ սրբազանը վարել է նաև հովվական պաշտոններ, գործոն կերպով մասնակցել է հասարակական աշխատանքների և զբաղվել է գրականու-

թյամբ։ Նրա դրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ՝ Հայ Եկեղեցու պատմության և վարդապետության վերաբերյալ (անտիպ)։ ԱՄՆ-ում ուսանողության տարիներին լուսահոգի Տ. Տ. Գարեգին Վեհափառ Հայրապետի փափագով, Բարգեն վարդապետը ձեռք է բերում նաև Կիրակնօրյա դպրոցների մասնագիտությունը։

Երկու տարի Անթիլիասում մնալուց հետո, նա 1952 թվականին հրավիրվում է Ֆիլադելֆիայի Ս. Երրորդություն եկեղեցու հովվության։

1955 թվականի սեպտեմբերին Բարգեն վարդապետը առաջին անգամ որպես ամերիկահայ եկեղեցական պատգամավոր ուխտի է գալիս Ս. Էջմիածին և Հայրենիք։

1956-ից մինչև 1957 թվականի սեպտեմբեր ամիսը, մինչև Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ ընտրվելը, ձեռնհասորեն վարում է Լիբանանում Կիլիկիայի Կաթողիկոսության Կիրակնօրյա դպրոցների ընդհանուր տեսչի պաշտոնը։

1957 թվականի նոյեմբերի 24-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Ազգիս Վեհափառ Հայրապետի։

Բարգեն սրբազանը մեր պատրաստված և հավատավոր հոգևորականներից է, լի եռանդով և հավատով՝ ծառայելու համար մեր Ս. Եկեղեցուն և ժողովրդին։

Արտանց հաջողություններ ենք մաղթում երիտասարդ սրբազանին իր նոր և պատասխանատու պաշտոնավարության մեջ։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, ավազանի անունով Ստեփան, ծնվել է 1925 թվականին Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում։ Շատ չանցած ծնողների հետ վերահաստատվում է Ալեքսանդրետի, երբեմնի Հայոց ծոցի, Սովուգ-սու գյուղում, ուր անցնում է փոքրիկ Ստեփանի մանկությունը։ Վաղ մանկական տարիքից նա զրկվում է ծնողական գուրգուրանքից և մնում է որբ, ճանաչելով որբության դառնությունները։ Փոքրիկ Ստեփանը իր բնածին քաղցր ձայնով իր շուրջ ստեղծում է համակրանք և շրջապատվում է ժողովրդի սիրով և պաշտպանությամբ։

1938-1939 թվականներին, երբ Ալեքսանդրետի շրջանը (այժմ Սանջակ) անջատվելով Սիրիայից հանձնվում է Թուրքիային, փոքրիկ Ստեփանը բազմահազար գաղթականների հետ գաղթում է Լիբանան՝ Բեյրութ, ուր նա շարունակում է իր կիսատ մնացած ուսումը Աբգարյան վարժարանում։

1941 թվականին նա ընդունվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանում որպես ուսանող։

1945 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժինը, սարկավագ է ձեռնադրվում ձեռամբ Տ. Կյուրեղ պատրիարքի։

Մինչև 1947 թվականի օգոստոս ամիսը սովորում է Ընծայարանում և նույն տարին ներդաղթում է Հայրենիք և երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի օրով ընդունվում է Մայր Աթոռի միաբանության շարքում որպես սարկավագ։

1951 թվականին նա կուսակրոն քահանա է ձեռնադրվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում և իր գեղեցիկ ձայնի համար վերանվանվում Տ. Կոմիտաս աբեղա։

Ապա երիտասարդ հոգևորականի առաջ բացվում է վանական-վարչական գործունեության լայն ուղի։ Նա ձեռնհասորեն վարում է Ս. Գեղարդի վանքի վանահայրությունը։ 1952—1954 թվականներին պաշտոնավարում է Թբիլիսիում և Բաքվում որպես Հոգևոր հովիվ, արժանանալով ժողովրդի ջերմ սիրուն և վանական իշխանության գնահատանքին։

1954—1955 թվականներին պաշտոնավարում է Մայր Աթոռում որպես երաժշտության դասատու Հոգևոր Ճեմարանի և փոխ-լուսարարապետ Մայր Տաճարի։

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Հայրապետի ընտրությունից հետո նշանակվում է նաև գավազանակիր Վեհափառ Հայրապետի։

1956 թվականի հունվարից նշանակվում է պատմական Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ, ուր ծավալում է շատ բեղուն գործունեություն՝ կազմակերպելով թեմի ազգային-եկեղեցական կյանքը։

1957 թվականի մայիսից Վեհափառ Հայրապետը, գնահատելով Տ. Կոմիտաս վարդապետի ազգանվեր գործունեությունը, նրան նշանակում է վրահայոց թեմի առաջնորդ։

1957 թվականի նոյեմբերի 24-ին, վրահայոց թեմական խորհրդի միջնորդությամբ, ձեռնադրվում է եպիսկոպոս վրահայոց թեմի վրա։

Տ. Կոմիտաս սրբազանը մեր խոստումնալից և երիտասարդ հոգևորականներից է, որի առաջ բացվում է ազգային-եկեղեցական գործունեության ընդարձակ ասպարեզ։

Վստահ ենք, որ սրբազանը, իր բարեմուչն բնավորությամբ և նվիրումով, կարդարացնի Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և իր հավատացյալ ժողովրդի սերը։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում իր երկրորդ բանախոսությունը կարդաց գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը «Ամերիկայի հայոց թեմն այսօր» նյութի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Բանախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը վերջում գոհունակություն հայտնեց Մամբրե սրբազանին նրա շահեկան բանախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՇԱԲԱԹ, առավոտյան ժամը 8-ին, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը ինքնաթիռով մեկնեց Մոսկվա։

Երևանի օդանավակայանում սրբազանին ճանապարհեցին Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանն ու հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Արամ քահանա Բոյաճյանը։ Սուրբ պատարագը երգեց հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, առաջին անդամը վառվեց Վեհարանի բակում նոր պատրաստված թոնիրը։ Վեհափառ Հայրապետը թոնիրում թխած հայկական անուշարույր լավաշով, պանրով և պես-պես կանաչիներով հյուրասիրեց Մայր Աթոռի միաբանությանն ու վանքի պաշտոնեությանը։ Վեհարանի ամենահամեղ ճաշն էր այս։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարի Ավագ Սեղանի վրա սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» բնաբանով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Կալիֆոռնիայի թեմբնտիր առաջնորդ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Վարժապետյանը։

Երևանի օդանավակայանում հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետին դիմավորեցին գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, հոգեշնորհ Տ. Ասողիկ և Տ. Վահան վարդապետները։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը նշանակվեց Արարատյան թեմի Հայրապետական ներկայացուցիչ և առաջնորդական փոխանորդ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում բանախոսեց հոգեշնորհ Տ. Ասողիկ Ծայրագույն վարդապետ Ղազարյանը «Հեռավոր Արևելքի՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ավստրալիայի հայ գաղութները» թեմայի շուրջ։ Բանախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց Ասողիկ վարդապետին՝ նրա բովանդակալից բանախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն»։ Մայր Տաճարում իր քահանայական առաջին սուրբ

պատարագը մատուցեց նորընծա արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը։

***

. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ ժամանեց Ադրբեջանի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը թեմական գործերով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 11-ին, առաջին անգամը լինելով, ուխտի գնաց Խոր Վիրապ։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը, ճարտարապետներ պր. պր. Մ. Մազմանյանը, Վ. Հարությունյանը, Բաֆֆի Իսրայելյանը և Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանը։ Վեհափառ Հայրապետը իջավ Խոր Վիրապ, իր աղոթքն ասաց և ուխտը կատարեց։ Ապա տեղվույն վրա քննվեց Խոր Վիրապի եկեղեցու վերանորոգության աշխատանքների նախագիծը։

Վեհափառ Հայրապետը ժամը 3-ին Խոր Վիրապից վերադարձավ Մայր Աթոռ լավագույն տպավորություններով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ս. Իշման Սեղանի վրա եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհիս» ընթերցանով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔՈՒՄ

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, տեղի ունեցավ ճարտարապետների խորհրդակցություն՝ Մայր Աթոռի 1958 թվականի շինարարական աշխատանքների նախագծերի պատրաստության կապակցությամբ։ Խորհրդակցությանը մասնակցում էին ճարտարապետներ պր. պր. Միքայել Մազմանյանը, պրոֆ. Կարո Ղաֆադարյանը, Վարազդատ Հարությունյանը, Բաֆֆի Իսրայելյանը, Կոթիկ Հովհաննիսյանը և Մայր Աթոռի ճարտարապետ Արծրունի Գալիկյանը։

Խորհրդակցության մասնակցում էր նաև Երևանի Պոլիգրաֆ կոմբինատի ինժեներ-ճարտարապետ Մատինյանը՝ Մայր Աթոռի տպարանի բացման աշխատանքների կապակցությամբ։

Խորհրդակցության ընթացքում կազմվեց Մայր Աթոռի 1958 թվականի շինարարական աշխատանքների ծրագիր։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Տաճարում, Ս. Իշման Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և քարոզեց «Հոգի Տեառն ի վերայ իմ» բնաբանով։

Բանախոսությունը լսվեց մեծ բավականությամբ։ Վերջում վերատեսուչ Տ. Հայկազուն սրբազանը շերմագին շնորհակալություն հայտնեց Տիրայր վարդապետին՝ նրա շատ հետաքրքրական և շահեկան բանախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՇԱԲԱԹ, առավոտյան ժամը 8-ին ինքնաթիռով Մոսկվա մեկնեց գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը։

Երևանի օդանավակայանում սրբազանին ճանապարհեցին գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և հոգեշնորհ Տ. Վահան և Տ. Եղիշե վարդապետները։

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԸ

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում բանախոսեց Ադրբեջանի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, «Անդրկասպյան երկրների՝ Թուրքեստանի և Ուզբեկստանի հայ գաղութները» թեմայի շուրջ։

Վերջերս Տ. Տիրայր վարդապետը, Վեհափառ Հայրապետի հրամանով, հովվական այցելություն էր կատարել Կասպյան երկրները։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների տոնի առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաքիրյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՇԱԲԱԹ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում այցելեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ կազմակերպված

ժողովրդական տնտեսության և մշակույթի ռեսպուբլիկական ցուցահանդեսը։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Բարգեն և Տ. Կոմիտաս եպիսկոպոսներն ու հոգեշնորհ Տ. Տիրայր և Տ. Մեսրոպ վարդապետները։

Ցուցահանդեսում բացատրություններ տվեց Երևանի Պետական պատմական թանգարանի դիրեկտոր պրոֆ. Կարո Ղաֆադարյանը։ Վեհափառ Հայրապետը հանգամանորեն ծանոթացավ ցուցահանդեսի բոլոր բաժիններին։

Վերջում Վեհափառ Հայրապետը իր տպավորությունները գրեց պաշտոնական այցելությունների ոսկեմատյանում.

«Այսօր, 30 նոյեմբերի 1957-ին, այցելեցինք մեր Հայրենիքի ժողովրդական տնտեսության և մշակույթի ցուցահանդեսը։

Դիտելով այն, ինչ ցուցադրված է ավելի քան տասնևութ սրահներու մեջ, և՛ հիացանք, և՛ խորապես մխիթարվեցանք, և ինչո՞ւ չէ, և՛ հպարտացանք փառավոր արդյունքներովը մեր վերածնած փոքրիկ ժողովրդի աշխատանքին, որ իր բոլոր ուժերը լարած, կկերտե իր նոր կյանքը և իր պայծառ ապագան։

Պատի՞վ և փա՞ռք տաղանդաշատ և աշխատասեր հայ ժողովրդին»։

Ս. ԲԱՂԻՐՅԱՆ

ՀՈՒԹԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՍԻՆ*

Դասարանում՝ դասատվության, երգեցիկ խմբի պարապմունքների, մասնավոր, խրմբական կամ անհատական հանդիպումների ժամանակ, ո՛րտեղ և ե՛րբ էլ լիներ, նույնիսկ կատակների ժամանակ, անբովանդակ խոսք չէինք լսում մենք Կոմիտաս վարդապետի բերնից։ Նա նույնիսկ բարկացած, ջղայնացած վայրկյանին մի ուսուցողական, խրատական բան կասեր իր դիմացինին։

Կոմիտաս վարդապետի վերին աստիճանի մանկավարժական հոգատար վերաբերմունքը, նրա լրջամիտ տոնով ասածները խորունկ տպավորություն էին թողնում իր աշակերտների վրա և առաջ բերում անկեղծ հարգանք ու մեծարանք դեպի ինքը։ Որևէ նյութի մասին խոսելիս, կամ դաս բացատրելիս, տվյալ հարցի կապակցությամբ սիրում էր նա միաժամանակ և խրատական խոսքեր ասել, երբեմն յուրջ, երբեմն էլ կատակի ձևով։

Երգի, երաժշտության, առհասարակ գեղարվեստի մասին խոսելիս, հմայիչ էր Կոմիտաս վարդապետը։ Խոսում էր նա պարզ, ոգեշընչված, խորիմաստ արտահայտություններով, ներշնչելով սեր դեպի երգն ու երաժշտությունը, դեպի գեղարվեստը։

— Լա՛վ սովորեցեք մեր ժողովրդի պատմությունը, ուսումնասիրեցե՛ք նրա կյանքը, նրա ավանդությունները, գիրն ու գրականությունը, մանավանդ ժողովրդական բանահյուսությունը,— ասում էր նա հաճախ։

— Մեր ժողովուրդը շատ բան է ստեղծել իր անցյալում, որի մեծ մասը դեռ գտնվում է անհայտության մեջ,— ասաց նա մի անգամ դասի ժամանակ։ — Հարկավոր է անցյալի մոխիրների տակից դուրս հանել ժողովրդի ստեղծած քանքարները. ժողովուրդն է ամենամեծ բանաստեղծ ուսուցիչը, որովհետև կարճ ու հակիրճ քառյակների, մանավանդ երգերի մեջ նա արտահայտում է այնքան վիշտ ու խինդ, տանջանք ու խոհեր, որքան գրողը մի ամբողջ գրքի մեջ։

Երգիչների ձայնը թարմ պահելու վերաբերյալ նա տալիս էր մեզ խրատներ։

— Կոկորդը գրգռող ուտելիքներից և խմիչքներից պետք է խուսափել։ Բացօդյա, մանավանդ խոնավ ժամանակ չերգել, չրղավել ու բարձր տոնով չխոսել,— ասում էր նա երգիչներին։ Հատուկ ուշադրություն էր դարձնում կրծքաձայն ունեցողների դնյառության վրա և հիշեցնում, թե ինչպես պետք է դնել, մանավանդ երգելու ժամանակ։— Ժուժկալությունը, չափավոր ուտել-խմելը, բացօդյա զբոսանքը, փափուկ անկողնուց խուսափելը, շատ լսել ու քիչ խոսելը, երգիչ մարդու ռեժիմի մեջ պետք է մտնեն,— ասում էր Կոմիտաս վարդապետը։

Իր պարտեզի տաղավարի մեջ մի թախտ կար մաքուր սավանով ծածկած և մի քար էլ գլխավերևը դրած. այդ կոշտ թախտի վրա էր քնում ինքը տաք եղանակներին։

***

Աշխատասիրության և առհասարակ կյանքի արժեքի վերաբերյալ Կոմիտաս վարդապետի ասածներից միտս են մնացել հետևյալները.

«Մարդու արժեքը չափվում է նրա կատարած գործերով»։

«Աշխատանքը մի հայելի է, որի մեջ արտացոլվում է աշխատողի կերպարը»։

«Սիրեցե՛ք երգը, սիրեցե՛ք բնությունը»։

«Ո՛չ դժվարությունից վախեցեք, ո՛չ էլ ճշմարտությունից խուսափեցեք»։

«Աշխատությամբ կարելի է շատ դժվարություններ հաղթահարել կյանքում»։

---

* Շարունակված ամսագրի 1957 թվականի N N 4—5-ից և 6-ից։

«Ժողովրդական իմաստությունը հավաքական է և դարերի փորձառության արդյունք»։

«Ուսումնասիրեցե՛ք գիտությունը, վերացրե՛ք տգիտությունը. դրանից է կախված ժողովրդի փրկությունը»։

«Հին գաղափարները եթե չլինեն, նոր գաղափարները չեն ծնվիր»։

***

Էջմիածնի ճեմարանում պարտադիր էր նաև հոգևոր-եկեղեցական երաժշտության ուսուցումը։

Հոգևոր երգերը, շարականները, տաղերը և մեղեդիները սովորում էին հատուկ հայկական նոտաներով։ Քանի որ երգիչ ճեմարանցիները պարտավոր էին մասնակցել եկեղեցական ժամերգություններին, հետևապես պետք է լավ իմանային, բացի եվրոպականից, նաև հայկական նոտաները, որովհետև բոլոր հոգևոր երգերը, շարականները և տաղերը ձայնագրված էին հայկական նոտաներով։ Այդ ժամանակ միայն Մակար Եկմալյանի պատարագն էր եվրոպական նոտաներով։

Կոմիտաս վարդապետը, ինչպես ժողովրդական երգերն էր սովորեցնում բացատրություններով, այնպես էլ հոգևոր երգերն էր անցնում, մեկնաբանելով նրանց ծագումն ու իմաստը։

Նա ասում էր, որ հայ աշխարհիկ և հոգևոր երգերի ծագումը այնքան հին է, որքան ինքը հայ ժողովուրդը։ Դեռ այն դարաշրջաններից երբ հայ ժողովուրդն ուներ իր բազմաթիվ աստվածները, պաշտամունքի առարկաները՝ արևը, լուսինը, կրակը, բնության երևույթները, ծիր-կաթինը, Վահագնը, Աստղիկը և այլն, ուներ ծիսակատարման երգեր, հեթանոս աստվածներին նվիրված ձոներ, տաղեր, մաղթանքներ, աշխատանքի և հերոսների գովքեր։

Հետագա դարերում, երբ քրիստոնեությունն է տարածվում Հայաստանում, ժողովրդին նկեղեցու և նոր կրոնի հետ կապելու համար, եկեղեցական գրող գործիչները ստեղծել են նաև տաղերն ու շարականները, որոնք բացառիկ տեղ են գրավում եկեղեցական երաժշտական արվեստի պատմության մեջ։

Հայկական թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր երգերը իրենց վրա կրում են հայ հանճարի ինքնուրույնության կնիքը, նրանք բխում են և սնվում նույն ակունքներից։ «Մեր ազգային աշխարհական և հոգևոր երգերը բխում են մեր ժողովրդի հնադարյան աղբյուրից, նրա կենցաղային իրականությունից»,— ասում էր Կոմիտաս վարդապետը։

Կոմիտաս վարդապետը մեր հոգևոր երաժշտությունը կատարում էր վարպետորեն, արտահայտիչ կերպով այնպես, ինչպես կատարում էր ժողովրդական երգերը։ Եվ ինչպիսի հաճույքով լսում էինք նրա աշխարհական երգի կատարումը, նույնպիսի հաճույքով էլ լսում էինք հոգևոր երգի կատարումը։ Ով լսել է գեթ մի անգամ Կոմիտաս վարդապետի երգած «Տէր ողորմեա»-ն, «Հրեշտակայինս»-ը, Տէր Կեցո»-ն, մինչև կյանքի վերջն էլ չի մոռանա։

Պատահական չի եղել, իհարկե, որ 1915 թվականին տաճկական գազանություններին զոհ գնացած Կոստանդնուպոլսի հայ մտավորականները իրենց նահատակության նախաժամին Այասի բանտում խնդրում են Կոմիտասին երգել վերջին անգամ «Տէր ողորմեա»-ն... (Ասում են, որ երգը չավարտած, տաճկական պահակ սպան մոտենում է ու ապտակում Կոմիտասին, որից հետո նա ընդմիշտ կորցնում է իր հոգեկան հավասարակշռությունը և չի լավանում մինչև մահը)։

Կոմիտաս վարդապետի բացատրական դասերն ու դրույցները, թե՛ աշխարհական և թե՛ հոգևոր երգերի և տաղերի մասին, այնքան համոզեցուցիչ, կատարումն էլ այնքան հուզիչ էր, որ շափագանց հետաքրքրում էին մեզ ու առաջացնում մեր մեջ անկեղծ սեր դեպի երգն ու երաժշտությունը, դեպի հայ ժողովրդի դարավոր մշակույթը։

***

Այստեղ ավելորդ չի լինի մի քանի խոսք ասել Կոմիտաս վարդապետի և Մանուկ Աբեղյանի համագործակցության մասին։

Այդ տարիներում երկուսն էլ դասախոսում էին Էջմիածնի ճեմարանում. Աբեղյանն անցնում էր հայ գրականություն և ժողովրդական բանահյուսություն։ Այդ երկուսի սերը դեպի հայ ժողովրդի գիրն ու գրականությունը, նրա ժողովրդական բանահյուսությունն ու արվեստը, երգն ու երաժշտությունը մոտեցրել էր նրանց ու դարձրել համագործակից ընկերներ այդ ասպարեզում, նրանք միասին հավաքում, ուսումնասիրում և մշակում էին ժողովրդական ստեղծագործությունները։ Նրանք միասին էլ հրատարակեցին այն ժամանակ «Հագար ու մի խաղ» փոքր ժողովածուն։ Աբեղյանը, որպես դասատու, շարադրության դասի ժամանակ, նյութի ընտրությունը թողնում էր աշակերտներին ասելով. «Ով ինչ նյութի մասին ուզում է՝ թող գրի. առակներ, առածներ, հեքիաթներ, լեգենդներ, պատմվածքներ ու նկարագրություններ։ Կոմիտաս վարդապետի նման, նա էլ պատվիրում էր ուսանողներին հետաքրքրվել, լսել ու գրի առնել ժողովրդական բանահյուսության նմուշները, սովորել ժողովրդից։

Մի անգամ էլ (կարծեմ հինգերորդ դասարանումն էր), Աբեղյանը շարադրության նյութը հայտարարեց կամավոր, և հայտնեց, որ այդ տարեվերջի ստուգողական աշխատանքն է լինելու հայոց լեզվից և գրականությունից։ Ես իմ շարադրության նյութը ընտրեցի Ղա-

բարաղի Ջրաբերդի շրջանում լսած ժողովրդական մի լեգենդից՝ «Ս. Նունե» վերնագրով։ Երեք օրից հետո տետրակները վերադարձնելիս, Աբեղյանը հայտարարեց դասարանում, որ ամենահետաքրքիր շարադրությունը պոեմի ձևով գրած ժողովրդական լեգենդ «Ս. Նունե»-ն է։ Ինքը կարդաց դասարանի առաջ և առաջարկեց ցույց տալ ականավոր բանաստեղծ Հ. Հովհաննիսյանին, որն ավանդում էր այդ ժամանակ Ճեմարանում ռուսաց լեզու և գրականություն։ Երբ մի քանի օրից հետո տարա Հովհաննիսյանին, նա կարդաց, հավանեց և մի քանի ցուցմունքներ տալով, պատվիրեց մշակել ու կարդալ Ճեմարանի տարեվերջի հանդիսավոր նիստին։ Մի տասն օրից հետո, երբ հանդեսին ելույթ ունեցա, «Ս. Նունե»-ն՝ արժանացավ ընդհանուր գովասանքի։ Կոմիտաս վարդապետը կանչեց ինձ ու ձեռքը դնելով ուսիս, գորովական տոնով ասաց. «Մեծագույն ուսուցիչը ժողովուրդն է, նրանից պետք է սովորել»։

1905 թվականին և հաջորդ տարիներին, ամռան արձակուրդների ժամանակ, Ճեմարանից հետո էլ, ես թափառել եմ Զանգեզուրում, Ղարաբաղում, Շամշադինում, Լոռիում, Վայոց ձորում, Շիրակում, Արարատյան դաշտում և Կոտայքում ու Ապարանում և ամեն տեղ էլ, հիշելով Կոմիտաս վարդապետի և Աբեղյանի խորհուրդները, հետաքրքրվել եմ ժողովրդական երգերով, հեքիաթներով, լեգենդներով, առակներով և բարոյախոսություններով։ Այդ նպատակով էլ գրուցել եմ ծերունիների, առակախոսների հետ, լսել եմ աշուղներին և հեքիաթ պատմողներին, ներկա եմ եղել ուխտագնացության, հարսանյաց հանդեսների և այլն։ Այդ թափառումների ժամանակ, որքան հնարավոր է եղել, դրի եմ առել կամ սովորել լսածներս, որոնցից մի մասը մշակել եմ, որքան կարողացել եմ։ Դրանցից Կոմիտաս վարդապետը լսել և հավանել է «Զանգեզուրի հորովելը»-ը, «Նազլու յարը»-ը, «Աղջի Մարանը»-ը, «Կայնի ասեմը»-ը, «Վալազար Շուշանը»-ը, «Ալվարա ջուրը»-ը և «Դարի բոմբը»-ը։ Սրանցից «Նազլու յարը»-ը և «Աղջի Մարանը»-ը հաղորդվում են ռադիոյով։ «Կայնի ասեմը»-ը դարձրել եմ «Կայնի գամ» և տեքստը մի քիչ փոխել։

Ինչ վերաբերում է առածներին, լեգենդներին և մանավանդ ժողովրդական բարոյախոսական իմաստաբանություններին, աֆորիզմներին, մեծ քանակությամբ ժողովել, գրի եմ առել ու քառյակների վերածել։ Կոմիտաս վարդապետն ու Աբեղյանը իմ մեջ արթնացրել են սեր դեպի ժողովրդական բանահյուսությունը։

* * *

Կոմիտաս վարդապետ, հայ ժողովրդի հանճարեղ զավակը, ապրեց իր ազգի վշտերով, աշխատեց իր ժողովրդի համար։ Նա հայ երգի համար կատարեց այն պատմական դերը, ինչ Թորոս Թորամանյանը՝ հայ ճարտարապետության մեջ։

Նա մեռավ ժամանակից առաջ, իր ստեղծագործական ուժերի փթթումի շրջանին։ Այնուամենայնիվ նա կմնա մեր երգի պատմության մեծանուն վաստակավորներից մեկը։

Կանցնեն դարեր, կգան, կերթան անթիվ սերունդներ, Կոմիտաս վարդապետը կհիշվի բոլոր տեղերում, ժամանակներում, տուր երգ ու սեր կլինի մարդկանց սրտերում։

---

1 Այդ շարադրությունը տպված է «Արարատ» ամսագրի 1909 թվականի մայիս ամսվա համարում։

ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱԵՂՆՈՐՀ Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
(1873—1957)

1957 թվականի հոկտեմբերի 22-ին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մեջ վախճանեցավ Տ. Փառեն սրբազանը։

Կիլիկյան միաբանության ուժեղ դեմքերեն մին էր սրբազանը, լրսելու համար ամենաուժեղը վերջին քսանամյակի ընթացքին։

Իբրև միաբանակիցը հանգուցյալին, կուզեի ամփոփ կերպով կենսագրել և հարգանքի իմ պարտականությունս կատարել անոր հիշատակին հանդեպ։

Քսաներորդ դարու Տոստևորդի վարդապետը եղավ ան մեզ համար իր կյանքով և անզիջող սկզբունքայնությամբ, որոնք զինք կընծայեն իբրև մին արևելյան վարդապետներեն, որ ապրած է մեր դարուն ու մեր մեջ։

***

Ներսես (ավազանի անունը հոգելույս սրբազանին) ծնի 1873 օգոստոս 3-ին, Էհնեշ (Եփրատի աջ ափին գյուղ մը), ոչ շատ հեռու պատմական Հռոմկլային։

Մեկ տարեկան երեխա, իր ծնողներուն հետ 1874-ին Այնթաբ կփոխադրվին, ուր իր նախնական կրթությունը կստանա ազգային Ներսեսյան և Վարդանյան կրթարաններու մեջ։

Կրոնասիրաց ընկերությունը 1890-ին զայն կղրկե Արմաշ, ուր կթրծվի Օրմանյան Ն Դուրյան սրբազաններու շունչին տակ։

1893 սեպտեմբեր 26-ին սարկավագ, իսկ 1896 սեպտեմբեր 15-ին աբեղա կձեռնադրվի Տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանեն, օծակից ունենալով աբեղաներ Տ. Թաթուլ Դուրյան, Տ. Վահրիմ Շահլամյան և Տ. Թորգոմ Գուշակյան (ապա պատրիարք Ս. Երուսաղեմի)։

Վարդապետական դավազանի իշխանություն կստանա 1898-ին և ծայրագույն վարդապետի աստիճան՝ 1908-ին Կոստանդնուպոլսո մեջ, Տ. Մաղաքիա պատրիարք Օրմանյանեն, իսկ եպիսկոպոս կձեռնադրվի 1947 մարտ 16-ին, Կիլիկիո Կաթողիկոսարանին Մայր Տաճարին մեջ, Անթիլիաս, Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսեն։

Վարած է պատասխանատու առաջնորդական-հովվական պաշտոններ Սղերդի, Բաղդադի, Հաճեն մեջ 1899—1913 թվականներուն։

1917 նոյեմբեր 4-ին էջմիածին երթալու փափագով ճամբա կելլե դեպի Պարսկաստան—Բաքու։ 1918-ին կստիպվի Աստրախան ապաստանիլ Կովկասի խառնաշփոթությանց հետևանքով։ Ապա կանցնի Ցարիցին (Ստալինգրադ), Վորոնեժ, Նովորոսիյսկ և վերջապես 1920-ի կաղանդի հրեկոյան կհասնի Կոստանդնուպոլիս։

1920—1921 թվականներուն քարոզիչ է Կոստանդնուպոլսո եկեղեցիներուն մեջ։ 1921-ին կկարգվի Դյորթ-Յոլի (Կիլիկիա) առաջնորդական փոխանորդ և վերին խնամակալ Քելեկյան ու Սիսվան սրբանոցներուն։

1923—1924 թվականներուն շատ տակնապալի պաշտոնավարություն մը կունենա Հալեպի մեջ իբր Կաթողիկոսական փոխանորդ, հարձակման կենթարկվի դաշնակցականներու կողմն, բայց չի հրաժարիր պաշտոնեն, մինչև որ Եփրեմ ծայրագույն վարդապետ Տոհմունի առաջնորդական տեղապահ կընտրվի։

Փոքրկալի կյանք մը ունեցած է Տ. Փառեն եպիսկոպոս։ Սակայն 1930-են մինչև իր վախճանումը խաղաղ կյանք մը ապրեցավ Անթիլիասի մեջ։ Դպրեվանքի գրաբարի դասերը ինք կավանդեր և կաշխատակցեր Կաթողիկոսարանի պաշտոնաթերթ «Հասկ»-ին։ Ան մեծ պայքարող մը եղավ ոչ միայն դաշնակ մենատիրության դեմ, այլ ամեն տեսակի բռնակալության դեմ։ Ոգի ի բռին պայքարեցավ 1941-ին Կիլիկյան կաթողիկոսական կանոնադրության դեմ։ Իր իսկ բառերով՝ «հակահայ եկեղեցական, անվավեր և վնասաբեր» կանոնագիր մըն է ան։ Մինչև իր մահվան վերջին շունչը մնաց անզիջող պայքարողը ապօրինության դեմ, մանավանդ Կիլիկյան Աթոռի վերջին անընդունելի ընտրության և ապօրինի «օծման» դեմ։

Նորապես կվշտանար իր հոգին, երբ մեկ կողմե հայ հոմեականներ, քրիստոնեությունն ու եկեղեցական պատմությունը խեղաթյուրելով, մարդասական նպատակներով իրենց «Ավետիք» պաշտոնաթերթին մեջ հոդվածներ կհրատարակեին, մյուս կողմե ներսեն, հայության ծոցին մեջեն մարդոց խումբ մը, ուղեկորույս քանի մը եկեղեցականներու հետ, հերձված հառաջացնել կփորձեին։

Հոգելույս Փառեն եպիսկոպոսի գրական վաստակը ցրված է Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի վերջին քսանամյա թիվերուն մեջ, հետևյալ նյութերուն շուրջ. «Հայկական Պատարագամատույցը», «Քրիստոնյան գերեզմանեն անդին», «Ավետիքյան խնդիրներ» և ականավոր եկեղեցականներու կենսագրություններ։

1956-ի հոկտեմբեր 15-ին պատահեցավ խուժդուժ դեպք մը, որ խռովեց Փառեն սրբազանի հոգին և ըմբոստացուց իր էությունը։ Հարյուրե ավելի զինված ոստիկաններու գունդ մը եկավ սրբազանի իսկ աշակերտ և օծակից եպիսկոպոսներու գիտակցությամբ ու դրդումով դուրս քշելու Խաղ սրբազանը, միարանությունը և անկողնին մեջ պառկող Փառեն եպիսկոպոսը։

Հանգուցյալ սրբազանը կտակեց, որ ես հոգամ իր երուսաղեմ երթը, թաղումը և գործերու ի մի ամփոփումը։

Հանգի՛ստ իր տառապած ոսկորներուն և խաղաղությո՛ւն իր խռովահույզ հոգիին։

ԲԱՐԿԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հոկտեմբերի 20-ին, կիրակի օր, Թբիլիսիի Հայոց Ս. Գևորգ եկեղեցում քահանա ձեռնադրվեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանը, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի շնորհաբաշխությամբ։

Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը ծնվել է 1932 թվականին Լենինականում։ Նրա ծնողները 1915 թվականին գաղթել են Մուշից և հաստատվել Հայրենիքում։

1939 թվականին Հովհաննեսը իր ծնողների հետ տեղափոխվում է Թբիլիսի, ուր և ստանում է իր նախնական կրթությունը։ 1948 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը անցնում է աշխատանքի։

Հովհաննեսը վաղ պատանեկան տարիքից սեր է ունեցել դեպի քահանայական սուրբ ասպարեզը։

1953 թվականին նա ընդունվում է Հոգևոր Ճեմարան՝ իր ուսումը շարունակելու և հոգևորական դառնալու հաստատ որոշումով։

Հովհաննեսը Ճեմարանում շատ լավ է սովորում, խորանում է գիտելիքների մեջ և իր ազնիվ վարք ու բարքով, ջանասիրությամբ և համեստությամբ գրավում է բոլորի համակրանքը։

1954 թվականի փետրվարին նա ստանում է դպրության չորս աստիճանները, իսկ 1955 թվականի դեկտեմբերին ձեռնադրվում է սարկավագ։ Նա իր ուսումը շարունակում է Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնում մինչև 1957 թվականի ուսումնական տարվա վախճանը։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և հրամանով 1957 թվականի հոկտեմբերի 20-ին նա ձեռնադրվում է քահանա։

Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը մեր Ճեմարանի լավագույն ուսանողներից մեկն է, պատրաստված, ազնիվ, համեստ, հավատավոր և անձնվեր։

Նորընծա Տ. Հովհաննես քահանան քահանայագործելու է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում։

Շնորհավորելով նորընծային, ցանկանում ենք նրան միաժամանակ արդյունավետ գործունեություն իր նոր ասպարեզում՝ հոգուտ մեր Ս. եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։